

## ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

### Անկախութեան Տարեդարձը Թող Դառնայ Սկիզբ

«ՄԱՍԻՍ»

Սեպտեմբեր 21-ին մեր հայրենիքը կը բնակախոսէ իր անկախութեան 25 ամեակը: 1991-ի այդ նոյն քուակահին, Հայաստանի հանրապետութեան ժողովուրդը ձայնեց 99.5 տոկոսով փուլարկեց խորհրդային Միութեան կազմէն դուրս գալու եւ իր անկախ պետութիւնը հռչակելու ի նպաստ:

Անկախութեան տարեդարձները կարեւոր նշանակութիւն ունին յատկապէս մեզ նման փոքր ժողովուրդներուն համար, որոնք իրենց պատմութեան մեծ մասը՝ դարերով շարունակ ապրած են ուրիշներու տիրապետութեան տակ, շատ կարճ ժամանակահատուածներու ընթացքին միայն, ունենալով իրենց անկախ պետականութիւնը:

Անկախութեան տարեդարձը անգամ մը եւս առիթ կը հանդիսանայ յետադարձ ակնարկ նետելու եւ խորհրդածութիւններ կատարելու ոչ միայն անցած ուղիին վրայ, այլ նաեւ հայրենիքի ապագային նկատմամբ, որ մեր ժողովուրդի գլխաւոր մտահոգութիւնը կը հանդիսանայ՝ Հայաստանէն մինչեւ սփիւռոք:

Անցնող երկու ու աւելի տասնամեակները մեր ժողովուրդին շնորհեցին բազմաթիւ հպարտառիթ պահեր: Կառուցեցին անկախ պետականութիւն՝ իր նախագահով, կառավարութեամբ ու խորհրդարանով: Պատերազմի դաշտի վրայ ունեցան յաղթանակներ՝ ազատագրելով Արցախը եւ հռչակելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ունեցան մեր ազգային բանակը, որ ի գին մեծ զոհողութիւններու, ամուր կը պահէ մեր երկրի սահմանները: Հայաստան դարձաւ միջազգային կազմակերպութիւններու լիիրաւան դամ, ունենալով իր դիւանագիտական ներկայացուցիչները աշխարհի հարիւրէ աւելի երկիր-

Շարք էջ 17

## Սերժ Սարգսեան ԶԱՊԿ Երկիրներուն Յիշեցուցած է Հայ-Ատրպէյճանական Սահմանի Վտանգաւոր Կացութեան Մասին



ՀԱՊԿ գագաթի ժողովի մասնակից երկիրներու ղեկավարները

Սեպտեմբեր 15-ին, Տաճիկստանի մայրաքաղաք Տուշանպէյի մէջ կայացաւ նախկին Խորհրդային Միութեան շարք մը երկիրները միաւորող Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազակերպութեան (ՀԱՊԿ) Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի նստաշրջանը:

Գագաթի ժողովը սկսաւ է նեղ կազմով բանակցութիւններով, որուն մասնակցեցան Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինը, Պելաուսի նախագահ՝ Ալեքսանտր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ՝ Նուրսուլթան Նազարբաեւը, Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեան, Ղրղզստանի նախագահ՝ Ալմազբէկ Աթամպաեւ, Տաջիկստանի նախագահ՝ Էմոմալի Ռահմոնը եւ ՀԱՊԿ-ի գլխաւոր քարտուղար Նիկոլայ Բորդիւժան:

Նստաշրջանի ընթացքին Սերժ Սարգսեան հանդէս եկաւ շարք մը նախաձեռնութիւններով: Հայաստանի նախագահը առաջարկեց ստեղծել ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի նախապատրաստման կեդրոն:

Ինչպէս կը սպասուէր, Սարգսեան իր մտահոգութիւնները յայտնեց հայ-ատրպէյճանական սահմանի լարուածութեան կապակցութեամբ:

«Ես ՀԱՊԿ անդամ պետութիւնների ղեկավարներին տեղ-

եակ եմ պահել Հարաւային Կովկասում տիրող իրավիճակի մասին՝ շեշտադրելով հայ-ատրպէյճանական սահմանին եւ դարաբաղա-ատրպէյճանական շփման գծում լարուածութեան աճի սպառնալիքը: Նորից չեմ ուզում անդրադառնալ այդ հարցին, միայն կ'ընդգծեմ, որ իրավիճակի սրմանն ուղղուած ատրպէյճանական փորձերը միջազգային հանրութեան համապատասխան արձագանգի բացակայութեան պարագայում յղի են ողջ տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման վտանգով»,- ժողովի մասնակիցներուն ըսաւ Սարգսեան:

ՀԱՊԿ անդամ միւս պետութիւնները որեւէ յայտարարութիւն չկատարեցին հայ-ատրպէյճանական սահմանի լարուածութեան առնչութեամբ:

Ծաւալուն ելոյթով այսօր հանդէս եկաւ Ռուսաստանի նախագահը, որ մեծ տեղ յատկացուց Սուրիոյ կացութեան: Փութին հերթական անգամ յայտարարեց, որ Մոսկուան կ'աջակցի եւ պիտի շարունակէ աջակցիլ Պաշար Ասատին:

Գագաթնաժողովին ստորագրուեցաւ շուրջ 15 փաստաթուղթ եւ ընդունուեցաւ ընդհանուր յայտարարութիւն:

Յաջորդ գագաթնաժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի՝ Երեւանի մէջ:

## Արեւմտեան Թեմի Յայտարարութիւնը՝ Արշակ Տիգրանեան Վարժարանի Վաճառքի Կապակցութեամբ

Հոյիվուտի շրջանէն ներս աւելի քան 30 տարիներէ ի վեր գործող եւ ԹԷԷԵԿԱՄ Մշակութային Միութեան հովանաւորութիւնը վայելող Արշակ Տիգրանեան վարժարանը փակուած է, այս վերամուտէն սկսեալ: Ցարդ՝ այս կապակցութեամբ ոչ մէկ հրապարակային քննարկութիւն տրուած էր հանրութեան:

Ստորեւ կը ներկայացնենք Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի հրապարակած հաղորդագրութիւնը՝ դպրոցի փակման եւ վանառքի վերաբերեալ, որ կու գայ քառական լոյս սփռելու տխուր իրադարձութեան վրայ:

Յաւ է մեզի համար խօսիլ ԹՄՄ «Արշակ Տիգրանեան» դպրոցի անփառունակ վախճանին մասին, որովհետեւ ինդոյ առարկան երբեմնի յարգանք վայելող պատկառելի կրթօճախ մըն էր հայ գաղութէն ներս: Հալիվուտի Սբ. Յովհաննու Կարապետ եկեղեցու շուքին ներքոյ՝ ԹՄՄ «Արշակ Տիգրանեան» դպրոցը միշտ ալ վայելած է ծովախիւս հովանաւորութիւնը: Արեւմտեան Թեմի մեր բարերարները տարիներ շարունակ տարածած են իրենց հոգածութիւնը դպրոցին վրայ:

Երբ անուղղակի կերպով տեղեակ դարձանք դպրոցի վաճառքի որոշման մասին, Սբ. Յովհաննու Կարապետ Ծուխը, ի դէմս Արեւմտեան Թեմի, հարազատութեան զգացումներով, ինչպէս նաեւ՝ հայ դպրոցի դռները բաց պահելու ազնիւ ցանկութեամբ զայն գնելու առաջարկ ներկայացուց Թէքէեան Մշակութային Միութեան՝ հաշուի առնելով նաեւ անշարժ գույքի այսօրուան շուկայական գները: Նման ծանր նիւթական եւ վարչական պատասխանատուութիւն ստանձնելը, նախեւառաջ, մեր բարոյական պարտքը համարեցինք Աստուծոյ օգնականութեան ապաւինելով՝ միայն թէ չօտարուէ հայ դպրոցը: Այս առաջարկին սատար կեցան նաեւ Թեմական Խորհուրդը եւ

Շարք էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

SUNDAY SEPTEMBER 20, 2015

VERDUGO PARK GLENDALE  
 1621 Canada Blvd., Glendale, CA, 91206 Starting at 11:00 am

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

Live Music  
 Dancing  
 Kids Games  
 Art Work Exhibition  
 Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ  
 ԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՎ ԳԻՐԵՐՈՒ ՎԱՃԱՌԻ  
 ՓՈՐՏԵՐՈՒ ԽԱՂԵՐ - ՀԱՄԱՂԱՄ ՃԱՇԵՐ

GENERAL SPONSOR  
 INNOVATIVE Designs Manufacturing Inc.  
 By TED & NORA KOROGHLIAN

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Ոչ»-ի յաջողութիւնն ու ռիսկերը

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Սեպտեմբերի 12-ին յայտարարուեց «Ոչ»-ի ճակատի ստեղծման մասին, որին, ինչպէս յայտնի է, անդամագրուել են եւ քաղաքացիական նախաձեռնութիւններ ու հասարակական կազմակերպութիւններ, եւ քաղաքական միաւորներ, ինչպիսիք են՝ ՀԱԿ-ը, «Ժառանգութիւնը» խորհրդարանից, նաեւ «Հիմնադիր խորհրդարանը», ԱԻՄ-ը եւ էլի մի շարք միաւորներ:

Այս ճակատում հաւաքուած կուսակցութիւնների եւ հասարակական միաւորների պատկերացումները տարբեր պետական կարեւոր խնդիրների մասին միջնադարձ են արմատապէս տարբեր, յաճախ իրարամերժ, առաջացրել սուր քննադատութիւն միմիանց հասցէին եւ այլն: Մակայն այսօր այս ուժերը յայտարարել են միասնական ճակատի մասին, որով պէտք է կանխեն Սահմանադրութեան փոփոխութիւնների գործընթացը: Թէ յատկապէս ինչ ճանապարհներով ու մեթոդներով՝ առայժմ չեն մանրամասնել:

Ուշագրաւը ըստ էութեան այն է, որ ճակատի ստեղծման մասին յայտարարութիւնների առանցքը կազմում է այն, որ սահմանադրական փոփոխութիւնները Հայաստանում հաստատուած

գարելը, իհարկէ, չափազանց կարեւոր խնդիր է, սակայն այդ խնդիրը բոլորովին չի նշանակում հեռացնել կամ խանգարել համակարգը՝ բռնապետութիւնը, քանի որ այդ համակարգում էլ ըստ էութեան, մեղմ ասած, քիչ չեն սեզմենտները, որոնք ոչ միայն դէմ չեն լինի Սերժ Սարգսեանին խանգարելուն եւ հեռացնելուն, այլեւ կարող են ամէն կերպ աջակցութիւն ցուցաբերել այդ խնդրի լուծմանը:

Եւ ուրեմն այստեղ ակնյայտ է, որ նորաստեղծ ճակատի դրած խնդիրը բաւական նեղ է՝ ի համեմատ այն մարտահրաւէրների եւ ռիսկերի, որ իշխանական վերարտադրութեան ներկայիս փուլը առաջ է բերում Հայաստանի համար, որովհետեւ այս պարագայում յաջողութիւնն ընդամէնը կարող է հաւասարագոր լինել նրան, որ իշխանական համակարգը գոհ տալով Սերժ Սարգսեանին՝ կարող է լուծել իր վերարտադրութեան խնդիրը, եթէ «Ոչ»-ի ճակատում, բացի Սերժ Սարգսեանի խնդրից, աւելի լայն համակարգային խնդիր դրուած չէ, եւ աւելի լայն խնդրի շուրջ կոնսոլիդացիայի հարցն անորոշ է:

Բոլոր դէպքերում՝ հաշուի առնելով այն, որ ներկայումս Հայաստանի առաջ կան աւելի կարեւոր խնդիրներ, քան Սահմանադրութիւնը փոփոխելն է, կարեւոր

Հայաստանի առաջ կան աւելի կարեւոր խնդիրներ, քան Սահմանադրութիւնը փոփոխելն է, կարեւոր կը լինի ընդհանուր առմամբ իշխանութիւններին խանգարել այդ հարցում եւ ստիպել, որ նրանք մտածեն աւելի կարեւոր հարցերում քայլեր անելու մասին

բռնապետութիւնը յաւերժ դեկավարելու յայտ են Սերժ Սարգսեանի կողմից, ինչն էլ իրենք պէտք է կանխեն: Սակայն ըստ էութեան հետաքրքրական պատկեր է ստացւում: Ստացւում է, որ ստեղծուած ճակատի խնդիրը ոչ թէ Հայաստանում հաստատուած համակարգն է, որը նրանք բնութագրում են որպէս բռնապետութիւն, այլ այդ համակարգի գլխին Սերժ Սարգսեանի առկայութիւնը:

Այսինքն՝ ըստ էութեան ստացւում է, որ նորաստեղծ «Ոչ»-ի ճակատը իր խնդիրն է համարում Սերժ Սարգսեանին խանգարել գլխաւորել բռնապետութիւնը կամ շարունակել գլխաւորել բռնապետութիւնը, իսկ ահա բռնապետութեանը խանգարել շարունակել իր ամբողջական գոյութիւնը ճակատը կարծես թէ չի պատրաստուած:

Այսինքն՝ ըստ էութեան ստեղծուած է ոչ թէ հակահամակարգային, այլ՝ հակասերժսարգսեանական միաւորում, քանի որ Սերժ Սարգսեանին հեռացնելը կամ խան-

կը լինի ընդհանուր առմամբ իշխանութիւններին խանգարել այդ հարցում եւ ստիպել, որ նրանք մտածեն աւելի կարեւոր հարցերում քայլեր անելու մասին: Եւ այս իմաստով, իհարկէ, «Ոչ»-ի ճակատի յաջողութիւնը, այսպէս ասած, վատ չէր լինի:

Միւս կողմից, սակայն, խնդիրն այն է, որ քանի որ առայժմ այդ ճակատի հիմքում աւելի շատ անձի, քան համակարգի դէմ պայքարն է, մեծ են ռիսկերը, որ այդ յաջողութիւնն իշխող համակարգը աւելի շատ իր օգտին կը ծառայեցնի, քան դա կը ծառայի պետութեան ու հասարակութեան օգտին:

Սա, իհարկէ, չի նշանակում հրաժարուել պայքարից, սա նշանակում է, որ այդ պայքարի հանրօգուտ գործողութեան գործակիցը նուազագոյն անհրաժեշտ արդիւնաւետութեան մակարդակի բերելու համար պէտք է թիրախի շրջանակը լինի համակարգն ամբողջութեամբ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Խուճապային վիճակ կառավարութիւնում

ՀՀԿ պատգամաւոր Սուքիաս Աւետիսեանը լրագրողներին ասել է, թէ թոշակների բարձրացման համար գումարներ չկան: Դա շուայլութիւն կը լինէր պիտոճէի համար, ասել է նա:

Յայտնի է դարձել, որ կառավարութիւնը չի սուբսիդաւորելու էլեկտրաէներգիայի թանկացումն այն ծաւալով, ինչ խոստացել էր: Դա էլ է երեւի շուայլութիւն:

Հայկական մամուլում գրեթէ ամէն օր տեղեկութիւններ են հրատարակուած կառավարութեան շուայլութիւնների վերաբերեալ: Օրինակ, միայն այս տարի Յովիկ Աբրահամեանի այցերի վրայ պիտոճէից ծախսուել է հարիւրաւոր միլիոն դրամ: Կառավարութեան

լուծ, թէ ֆինանսական, թէ տեխնոլոգիական, քանի որ դա կը նշանակէր անուղղակի աջակցութիւն Ռուսաստանին: Այսինքն, չի սպասուած սոցիալ-տնտեսական զարգացում:

Կայ իհարկէ ներքին ռեֆորմների, կոռուպցիայի դէմ պայքարի ու տնտեսութեան կառուցուածքն ու բնոյթը փոխելու ճանապարհը, մասնաւորապէս՝ գործութիւնը, շուայլումներն ու մսխումները վերացնելու, ծախսերն օպտիմալացնելու ճանապարհը: Սակայն կառավարութիւնը դրան չի գնայ, քանի որ նրա գոյութեան հիմքը հենց կոռուպցիան ու մնացած արատներն են: Հայաստանում տնտեսական քաղաքականութիւն չկայ, կայ ընդամէնը սպառուող ռեսուրսների պայ-

Հայաստանում տնտեսական քաղաքականութիւն չկայ, կայ ընդամէնը սպառուող ռեսուրսների պայմաններում համակարգը պահպանելու յուսահատ փորձեր, գոյութեան պայքար

վերանորոգումների, գնումների վրայ նոյնպէս ծախսուած են ահռելի գումարներ: Նոյն վիճակն է Ազգային ժողովում, պետական բոլոր կառույցներում:

Իշխանութեան բառապաշարում չկան ինսյոլութիւն եւ այդ կարգի բառեր ու հասկացութիւններ: Այն ինչ, թուում էր Հայաստանի ներկայիս իրավիճակում նրանց ամէն մի բառն ու բանը պէտք է լինէին հենց դրանք, բխէին այդ իրավիճակից: Բայց դա յատուկ է պետական-քաղաքական գործիչներին: Փոխարէնը, վարչապետը տարօրինակ յամառութեամբ արտաբերում է տնտեսական աճ բառերը, որը տարակուսանքով են ընդունում մասնագէտները:

Արդեօք վարչապետը տեղեակ չէ իրավիճակից, թէ ինչ որ մէկին ինչ որ բան է ուզում ապացուցել: Հնարաւոր է՝ նա անընդհատ տնտեսական աճի մասին է խօսում հենց այդ շուայլումներն արդարացնելու համար:

Փորձագէտները համարում են, որ տնտեսական աճի մասին յայտարարութիւնները փակուղային իրավիճակի հետեւանք է, որում յայտնուել է կառավարութիւնը:

Ռուսական-եւրասիական բլեֆը լիովին բացայայտուել է: Ընդ որում, Ռուսաստանի ներկայիս վիճակը շարունակուելու եւ խորանալու է, որի մասին արդէն խօսում են այդ երկրի առաջին դէմքերը:

Չինական ու իրանական ուղղութեամբ նախագծերը, առաջարկներն ու սպասումները բաւական անորոշ են: Բանն այն է, որ դրանք իրականանալու դէպքում անգամ արագորէն անցնելու են ռուսների վերահսկողութեան տակ, որը միջոցների սուր կարիք ունի: Հայաստանի իշխանութիւնը փորձում է Հայաստանը «կամուրջ» դարձնել Եւրասիական Միութեան հետ, սակայն դա մեղմ ասած հեռու է իրականութիւնից:

Արեւմուտքը տալիս է այնքան գումար, որպէսզի Հայաստանի սոցիալական ու ֆինանսական համակարգերը չփլուզուեն, եւ ապահովուի վարկերի վերադարձելու թիւնը: Ներդրումներ չեն սպաս-

մաններում համակարգը պահպանելու յուսահատ փորձեր, գոյութեան պայքար:

Այս պայմաններում, կառավարութեան քայլերն աւելի են խորացնում ստեղծուած իրավիճակը, դառնալով աւելի ու աւելի անհամարժէք Հայաստանի առջեւ կանգնած մարտահրաւէրներին:

Հոգեբաններն ասում են, որ աղէտային իրավիճակներում ճոխութեան հակումն ու շատ ուտելը վախի ու խուճապի նշան են:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ
SOPH. UNCLY QUAQUETS
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսապայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ոչ»-ի ճակատը Սահմանադրական Փոփոխութիւնների Դէմ Պայքարի Երկու Տարբերակ է Քննարկում



«Ոչ»-ի մակատին մասնակցող կուսակցութիւններու եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչները՝ խորհրդակցութեան ժամանակ

«Ձե՛ք Անցկացնի՛ր» նախաձեռնութիւնը, որը միասնական «Ոչ»-ի շուրջ է միաւորել քաղաքական ու հասարակական ուժերին, այժմ պայքարի երկու տարբերակ է քննարկում: Նախաձեռնութեան անդամ Արմէն Գրիգորեանը «Ազատութեան» հետ զրոյցում ասաց, որ տարբերակներից մէկով Սերժ Սարգսեանի նախաձեռնած գործընթացը պէտք է տապալեն մինչ հանրաքուէն՝ փողոցային պայքարի միջոցով - «Յոյցին ենք նախապատրաստուած Գիւմրիում ու նաեւ փորձելու ենք ցոյցեր կազմակերպել Ազգային ժողովի դիմաց, որը եւս շատ կարեւոր է»:

Երկրորդ տարբերակով էլ «Ոչ» ասող ուժերը պէտք է հանրաքուէի գործընթացին մասնակցեն եւ հիմնաւորեն իրենց դիրքորոշումը: Այս նպատակով արդէն 20 իրաւաբաններից կազմուած խումբ է ստեղծուել, որը «Ոչ»-ի հիմնաւորման փաստաթուղթ է ստեղծելու: Բացի «Ոչ» քարոզչությունը, նաեւ հսկելու են հանրաքուէի ընթացքը: Այդ նպատակով ստեղծուելիք դիտորդական խումբը փորձելու է կանխել հնարաւոր խախտումները:

«Ժամանակ»:

ԵՏՄ-ն Յովիկ Աբրահամեանի հարցն է դնում

«Ժամանակ» թերթը գրում է. «Հրապարակուել են Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի կանխատեսումները, որոնք Հայաստանի համար, մեղմ ասած, չտեսական են: Ըստ այդ կանխատեսումների, Հայաստանը տարին կը փակի 0,9 տոկոս աճով, իսկ ԵՏՄ-ն ընդհանրապէս կ'արձանագրի 2,4 տոկոս անկում: Հայաստանում կառավարութիւնը, իսկ աւելի ճիշդ՝ վարչապետ Յովիկ Աբրահամեանը, ինտենսիւօրէն փորձում է համոզել բոլորին, որ կիսամեակային 4,4 տոկոս տնտեսական աճ կայ: Եթէ կիսամեակային 4,4 տոկոս աճ կայ,

տուժները: «Ոչ»-ի ճակատի շատ ուժեր կարծում են, որ այս պայքարի ընթացքում պէտք է նաեւ իշխանութիւնների հրաժարականը պահանջել: Գրիգորեանը ասաց, որ իրենք էլ են կողմ դրան, բայց հարցը դեռ պէտք է բոլորի հետ քննարկենք:

«Ոչ»-ի ճամբարը պատրաստ է նոր ուժեր ընդունել իր շարքերը: Եթէ իրենց միանալու ցանկութիւն յայտնի Ռոբերտ Քոչարեանը, ապա միայն միւս ուժերի հետ քննարկելուց յետոյ որոշում կը կայացնեն, քանի որ հարցը նուրբ է եւ կարող է պառակտել շարժումը:

«Այս պահին ես չեմ տեսնում ինքը ինչ-որ քայլեր ձեռնարկելու է, թէ չի ձեռնարկելու», - մեկնաբանեց Գրիգորեանը:

«Ոչ»-ի կողմնակից է նաեւ Քոչարեանի մտերիմ, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը: Արմէն Գրիգորեանը պատմեց, որ վերջերս նրա հետ անձամբ է հանդիպել: Օսկանեանը հիմա կուսակցութիւն ստեղծելու աշխատանքով է զբաղուած եւ ճակատին միանալու մասին բան չի ասել:

ապա առնուազն զարմանալի է, թէ ուր է ցնդելու այդ աճը երկրորդ կիսամեակում, ըստ ԵՏՄ Յանձնաժողովի կանխատեսումների: Սա նշանակում է, որ ԵՏՄ տնտեսական յանձնաժողովը կ'սպասուի է, որ երկրորդ կիսամեակում Հայաստանի տնտեսութեան համար լուրջ ցնցումներ են լինելու, եւ 4,4 տոկոս կիսամեակային աճից մնալու է ընդամենը 0,9 տոկոսը, կամ էլ ԵՏՄ Յանձնաժողովը Հայաստանում ոչ մի 4,4 տոկոս աճ էլ չի արձանագրել, եւ եղածը ընդամենը հիմք է տալիս կանխատեսել 0,9 տոկոս աճ՝ տարեկան կտրուած քով:

ուստատառադիտընկերութեան խորհուրդը որոշում է կայացրել սեփական խնայողութիւնների հաշուին կազմակերպել եւ Սեպտեմբերի 16-ից իրականացնել խորհրդարանում սահմանադրական քննարկումներին նուիրուած նիստերի ուղիղ հեռարձակումը Հանրային հեռուստարձակութեան եթերում: Այդ մասին ասուած է Հանրային հե-

Փորձագէտ. «Վարչապետը Հայաստանի Անխօս Առաջնորդ Չի Դառնայ»

Նոր Սահմանադրութեամբ վարչապետը Հայաստանի անխօս առաջնորդ չի դառնայ: Այս մասին Հայաստանի խորհրդարանի նիստում յայտարարեց Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի անդամ Վարդան Պողոսեանը:

Պատճառն այն է, որ վարչապետը, կառավարութեան հետ միասին, հաշուետու է լինելու խորհրդարանին: Եթէ Ազգային ժողովը տեսնի, որ գործադիր իշխանութիւնը չի համապատասխանում ընտրազանգուածին տուած խոստումներին, կարող է նոր կառավարութիւն նշանակել:

Այլ կերպ ասած, ըստ փորձագէտի, կառավարութիւնը, նոյնիսկ խորհրդարանական մեծամասնութիւն ունենալով, միշտ ձգտելու է հաշուի նստել խորհրդարանի հետ:

«Իսկ այժմեան համակարգի դէպքում նախագահը, իշխող մեծամասնութիւն ունենալով, կարող է ազդել խորհրդարանի վրայ, իսկ ահա յետագարձ ազդեցութիւնը շատ աւելի թոյլ է», - նշեց Պողոսեանը:

Սահմանադրութեան նոր նախագծով ընդդիմութիւնը կարող է կառավարութեան հրաժարական պահանջել միայն կառուցողական հիմունքներով: Այդ մասին խորհր-



Մասնագիտական յանձնաժողովի անդամ Վարդան Պողոսեան

դարանում ասել է Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովի անդամ, սահմանադրագէտ Վարդան Պողոսեանը:

Վարչապետին անվստահութիւն յայտնելու նախագիծը կարող են ներկայացնել պատգամաւորների 1/3-ը, բայց միայն այն դէպքում, եթէ առաջադրեն նոր վարչապետի թեկնածութիւն, ասել է Պողոսեանը:

«Ընդդիմութիւնը հնարաւորութիւն կունենայ քուէարկութեան դէպքէ կառավարութեանը անվստահութիւն յայտնելու հարցը, բայց երբ առաջարկի իր թեկնածուին: Իսկ միւսների վստահութիւնը շահելու համար պէտք է համոզիչ փաստարկներ ներկայացունեն: Այլ խօսքով, դրուած են իշխանափոխութեան կոնստրուկտիւ հիմքեր», - նշել է նա:

Փաստաբանների Անկախ Խումբը Կոչ է Անում «Ոչ» Ասել Սահմանադրական Փոփոխութիւններին

Շուրջ երկու տասնեակ փաստաբանների միաւորող խմբի անդամներից Գէորգ Գյոզալեանը «Ազատութեան» հետ զրոյցում նշեց, թէ այսօր Հայաստանում սահմանադրական բարեփոխումների «օբիեկտիւ անհրաժեշտութիւն չկայ»:

«Ցանկացած գործիք փոխելու դէպքում նախ պէտք է ցոյց տրուի հանրութեանը, որ այդ գործիքը նորմալ չի աշխատում: Սահմանադրութիւնը, որպէս կանոն, գործիք է, որը պէտք է աշխատացնել: Այս վերջին 10 տարիների ընթացքում պարզապէս չի գործել, եւ դրա վառ ապացոյցը կեղծուած ընտրութիւններն են: Այս ամբողջը երբ որ մենք նայում ենք, տեսնում ենք, որ Սահմանադրութեանը դեռ հասնելուն, այնքան բան կայ այս երկրում փոխելու, որ Սահմանադրութիւնը ամենավերջին բանն է, որ կարելի է փոխել»:

Անդրադառնալով սահմանադրական փոփոխութիւնները նախաձեռնելու նպատակին՝ փաստաբանն ասաց. - «Գերակայող հիմնական նպատակը նա է, որ այստեղ ուզում են անցնել կառավարման խորհրդարանական ձեւին, եւ դա ակնյայտ է: Իսկ խորհրդարանական ձեւին անցնելու պարագայում, օրինակ, «Իքս» կուսակցութիւնը, դա կլինի Հանրապետականը կամ այլ, կարող է անվերջ իշխանութեան դեկին լինել»:

Հարցին, թէ ինչն էր խանգարում նախագահական կառավարման պայմաններում նոյնն անել, Գյոզալեանն արձագանգեց. - «Մենք գիտենք, որ երկու անգամ անընդմէջ նախագահը չի կարող լինել

իշխանութեան դեկին: Մենք Ատրպէյճան չենք: Հայաստանը փոքր երկիր է, ուստւրմները շատ փոքր են: Հայաստանը շատ կախուած է գերտէրութիւններից, եւ գերտէրութիւնների կողմից շատ սխալ կը հասկացուի, որ նախագահը փորձում է անվերջ ինչ-որ հաւակնութիւններ ներկայացնել: Եւ շղարշ ստեղծելով ժողովրդավարութեան, կառավարման խորհրդարանական համակարգ ներկայացնելով՝ երկու հարց կը լուծենք. կը լուծենք, որ մենք, տեսէք, ինչ ժողովրդավար ենք, մեզ մօտ պառլամենտարիզմ է, եւ երկրորդը՝ կը լուծենք ինչխանութիւնը անվերջ պահելու հարցը»:

Գյոզալեանի փոխանցմամբ, իրենց խումբը յաջորդ ամիս հրապարակելիք զեկոյցում ցոյց է տալու, որ Հայաստանի թիւ մէկ խնդիրը Սահմանադրութիւնը չէ, այսինքն՝ երկրի մայր օրէնքը չի մեղաւոր, որ մարդիկ այսօր վատ են ապրում. - «Մենք ասում ենք՝ ժողովուրդը, որ դուք ուզում էք լաւ ապրէք, ուրեմն սա է խնդիրը: Սահմանադրութիւնը չի խնդիրը: Խնդիրը երկրում առկայ կոռուպցիան է, խնդիրը կեղծուած ընտրութիւններն են եւ այլն»:

Խումբն իր զեկոյցում կներկայացնի նաեւ բարեփոխումների նախագիծում տեղ գտած այն դրոյթները, որոնք ոչ թէ առաջընթաց, այլ լուրջ յետընթաց ու վտանգներ են առաջացնում, օրինակ, մարդու իրաւունքների ոլորտում: Ուստի փաստաբանների խումբը կոչ է անում «ոչ» ասել իշխանութիւնների նախաձեռնած բարեփոխումներին:

ուստատառադիտընկերութեան խորհրդի նախագահ Ռուբէն Զա-

դինեանի տարածած յայտարարութիւնում:

# ԼՈՒՐԵՐ

## «Ստրատֆոր»․ Ղարաբաղի Հարցում Հնարաւոր Է Նշանակալից Շրջադարձ

Ըստ «Ստրատֆոր» հետազոտական կենտրոնի, Լեռնային Ղարաբաղի երկարատեւ, սառեցուած հակամարտութիւնում առաջիկայ ամիսներին հնարաւոր է նշանակալից շրջադարձ կատարուի:

«Գնալով աճում են նախանշանները, որ Ռուսաստանը եւ Ատրպէյճանը կարող են համագործակցել՝ խաթարելու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ստատուս քվոն, կապուած այն բանի հետ, որ Ռուսաստանը պատրաստուած է խաղաղապահներ ուղարկել այնտեղ եւ փորձել երկարաժամկէտ վերահսկողութիւն սահմանել տարածաշրջանի նկատմամբ», - գրում են «Ստրատֆոր»-ի վերլուծաբանները:

Նրանց խօսքով, կարելի է նշաններ տեսնել, որ Լեռնային Ղարաբաղի աւելի քան երկու տասնամեակ սառեցուած հակամարտութեան հանդէպ Ռուսաստանի ռազմավարութիւնը սկսում է փոխուել:

«Ամէն դէպքում, նախկինի համեմատ Ատրպէյճանի եւ Ռուսաստանի վերջին ամիսների շատ աւելի լաւ յարաբերութիւնները մտածելու տեղիք են տալիս, թէ արդեօք Մոսկուան Ատրպէյճանին հրապուրիչ առաջարկ էլ արել Լեռնային Ղարաբաղի խիստ ազդաչնական թեմայով», - գրում են վերլուծաբանները՝ նշելով, որ Ատրպէյճանին յոգնեցրել են ԵԱՀԿ-ի միջնորդութեամբ տարուող բանակցութիւնները եւ Եւրոպայի հետ համագործակցութիւնը, եւ Ատրպէյճանը կը ցանկանար տեսնել, թէ արդեօք վերջին տարիներին ռազմական պատրաստուածու-

թեան օգնութեամբ չի կարող տարածքները հետ բերել:

«Հայաստանը, զբաղեցնելով այդ տարածքների բարձունքները, պահպանում է Ատրպէյճանի նկատմամբ ռազմավարական առաւելութիւնը եւ ակնյայտօրէն զերադասում է պահպանել ստատուս քվոն», - արձանագրում է «Ստրատֆոր»-ը՝ ընդգծելով. - «Միակ ճանապարհը, որը Լեռնային Ղարաբաղի հարցում Հայաստանին կը ստիպի վերաբանակցել պայմանները, մարտական գործողութիւնների վերսկսումն է, եւ Ռուսաստանը՝ որպէս Հայաստանի միակ հովանաւորը, դրանց վերջ տալու համար կը խաղայ միջնորդի գլխաւոր դերը: Մենք կասկածում ենք, որ այս պլանը կարող է Հայաստանի վրայ դրուել միայն դիւանագիտական միջոցներով», - գրում են «Ստրատֆոր»-ի վերլուծաբանները՝ վերջում նշելով, թէ, այնուամենայնիւ, չեն կարող վստահ լինել, որ այս սցենարն անպայման կ'իրագործուի, սակայն բաւականին նշաններ ունեն, ինչը թույլ է տալիս Լեռնային Ղարաբաղի հարցով հնարաւոր ցնցումները դնել իրենց հետազոտութիւնների ցանկի առաջին շարքում:

«Ունենալով Լեռնային Ղարաբաղը իր որդեգրմանը սպասող տարածքների ցանկում՝ Ռուսաստանը հաւատարիմ կը մնայ իր սահմաններից դուրս ոտքի տեղանելու եւ աւելի ընդլայնելու քաղաքականութեանը», - նշուած է «Ստրատֆոր»-ի վերլուծութիւնում:

## Առանց Վրաստանի Իրան-Հայաստան Երկաթուղին Յաջողութեամբ Չի Պսակուի

Եթէ Վրաստանը կողմնասած չմտնի խաղի մէջ, դժուար թէ երբեք կարելի կը լինի յաջողութիւն սպասել Իրան-Հայաստան երկաթուղու հարցում: Այս մասին Սեպտեմբերի 15-ին «Իրան. Պատ-ժամիջոցների չեղարկում եւ հնարաւոր տարածաշրջանային իրադարձութիւններ» թէմայով քննարկման ժամանակ, յայտարարեց ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտաշխատող Գոհար Իսկանդարեանը:

«Ճիշդ է, մենք ԵՏՄ անդամ

ենք, սակայն ուր եւս մենք գնում: Դէպի պատ: Անհրաժեշտ է հաշուի առնել, որ եթէ Իրանը իրականում ուզում է համագործակցել ԵՏՄ երկրների հետ, ապա դա կարող է անել կասպից ծովով: Այո՛, Ատրպէյճանը այս հարցում մեզ համար լուրջ մրցակից է: Ատրպէյճանում հիմա նոյնպէս երկաթուղի է կառուցուում 400 մլն դոլար արժողութեամբ: Որտեղ է այդ գումարը, որտեղ է 3 մլրդ 200 մլնը: Ինքն ըրդ դատէք», - եզրափակեց Գոհար Իսկանդարեանը:

## Սահմանադրական բարեփոխումների Գալտակցի Սերժ Սարգսեանի Իշխանութիւնը Երկարաճգելն Է. Արամ Մանուկեան

Սահմանադրական բարեփոխումները նախաձեռնուած են մէկ նպատակով՝ երկարաճգել Սերժ Սարգսեանի իշխանութիւնը: Այս մասին NEWS.am-ի թղթակցին յայտարարել է ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը:

«Ես դէմ եմ նոր Սահմանադրութեանը, այդ պատճառով չեմ ուզում խորանալ նախագծի կէտերի բովանդակային քննարկումներ

րի մէջ: Նրանցից ոչ մէկը ես նորմալ չեմ համարում», - ասել է Մանուկեանը:

Նրա խօսքով՝ ինչ հիմնաւորումներ էլ որ բերուեն օգուտ բարեփոխումների, համակարգը գաղտնի նպատակ ունի՝ երկարաճգել Սերժ Սարգսեանի իշխանութիւնը: «Բոլոր բացատրութիւնները արտաքին տարրեր են, որոնք թաքցնում են էութիւնը», - յաւելեց Մանուկեանը:

## Ֆրանսուա Օլանտ կը պարգևատրի Մարք Մուղալեանը

Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտ շքանշանով մը պարգևատրեց Հայազգի դասախօս Մարք Մուղալեանը, որ Ամսթերտամ-Փարիզ գնացքին մէջ այլոց հետ դէմ դրած էր գինեալի մը յարձակումի փորձերուն եւ ձախողութեան մասնաձեւ անմեղ մարդիկ սպաննելու ծրագիրը: Միջադէպին ընթացքին Հայազգի դասախօսը վիրաւորուած եւ հիւանդանոց փոխադրուած

## Լեւոն Հայրապետեանը Ազատուեց Նաեւ Տնային Կալանքից

Քանի որ սպառուել էր քննութեան ընթացում կալանքի տակ գտնուելու առաւելագոյն ժամկէտը, Մոսկուայի դատարանը հայազգի գործարար Լեւոն Հայրապետեանի տնային կալանքը փոխարինել է Ռուսաստանից չբացազայելու մասին ստորագրութեամբ:

ՏԱՄՍ լրատուական գործակալութեան փոխանցմամբ՝ Հայրապետեանի տնային կալանքի ժամկէտը լրացել էր Սեպտեմբերի 15-ին:

Հայրապետեանը, չիչեցնենք, մեղադրուած է 2008 թուականին «Բաշնեֆտ» ընկերութեան վաճառքի ժամանակ ֆինանսական խարդախութիւն անելու մէջ: Նա ձերբակալուեց, ապա անցած տարուայ Յուլիսին կալանաւորուեց: Հոկտեմբերի սկզբին առողջական խնդիրների պատճառով նրանկատմամբ խափանման միջոցը փոխարինուեց տնային կալանքով: Լեւոն Հայրապետեանը մեղադրուած է նաեւ Բաշկիրիայի նախկին սենա-



Հայազգի գործարար Լեւոն Հայրապետեան

տոր Իգոր Իգմեստելի մօրից խարդախութեամբ 700 հազար դոլար իւրացնելու մէջ եւ այս գործով կալանքի տակ էր անցած տարուայ Սեպտեմբերից: Այս տարուայ Ապրիլին, սակայն, Հայրապետեանի գործն անջատուեց «Բաշնեֆտ»-ի ընդհանուր գործից, եւ այժմ նրան մեղադրուած է միայն գումարների իւրացման դրուագը:

## Բ. Եստուկեան.

### «Թուրքիայի Հայերի Մեծ Մասը Քուէարկել Է Քրդական Կուսակցութեան Օգտին

Ներկայումս Թուրքիայի հայերը նախորդ տարիների համեմատ առաւել քաղաքականացուած են: Այս մասին, այսօր՝ սեպտեմբերի 14-ին, Երեւանում տեղի ունեցած քննարկման ժամանակ յայտարարել է Ստամբուլի «Ակօս» շաբաթաթերթի հայերէն էջերի խմբագիր Բագրատ Էստուկեանը: Անդրադառնալով Թուրքիայի հայկական համայնքի այսօրուայ իրավիճակին, էստուկեանը նշել է, որ հայերը սովորաբար միշտ քուէարկում են աջ կուսակցութիւնների օգտին:

«Սակայն այս ողջ գործընթացի ընթացքում կարեւոր փոփոխութիւն տեղի ունեցաւ: Հայկական համայնքի ներկայացուցիչների մեծամասնութիւնը քուէարկեց քրդական ժողովուրդների դեմոկրատական կուսակցութեան (HDP) օգտին: Սա աննախադէպ երեւոյթ էր», - ընդգծել է էստուկեանը:

## Փորձագէտ. Թուրքիան Այլատյացութեան Շատ Վտանգաւոր Վերածնունդ Է Ապրում

Թուրքիան ներկայումս այլատյացութեան շատ վտանգաւոր վերածնունդ է ապրում: Այս մասին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Քաղաքական եւ միջազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնի փորձագէտ Ռուբէն Մեհրաբեանը:

Նրա խօսքով, Թուրքիայում այսօր քառս է տիրում, եւ դա տեղի է ունենում, քանի որ այդ երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոգանը որոշել է միանձնեայ իշխանութիւն հաստատել երկրում: «Այդ ամէնը նպատակ է ողջ տարածաշրջանում լարուածութեան մեծացմանը», - ընդգծել է փորձագէտը: Յիշեցնենք, որ խոշոր ահա-



«Ակօս»-ի խմբագիր Բագրատ Էստուկեան

Նա նաեւ յաւելել է, որ յունական համայնքը նոյնպէս վերջին ընտրութիւններում քուէարկել է HDP-ի օգտին: Էստուկեանի խօսքով, Թուրքիայում քառսային իրավիճակ է եւ իշխանամէտ լրատուամիջոցների քարոզչութիւնն ուղղուած է հայերի դէմ:

բեկչութիւնից յետոյ, որի ժամանակ մահացել էին մեծ թուով քուրդ երիտասարդներ, իրավիճակը երկրում կտրուկ սրուել է: Թուրքիայի իշխանութիւնների եւ Քուրդիստանի բանուորական կուսակցութեան (PKK) միջեւ հրադադարը խզուել է, թէ՛ բախումներ են տեղի ունենում:

Նոյեմբերի 1-ին Թուրքիայում տեղի են ունենալու արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, քանի որ Յուլիսին կայացած ընտրութիւններում մեծամասնութիւնից զրկուած էրդոգանի կուսակցութիւնը չի կարողացել կոալիցիոն կառավարութիւն ձեւաւորել:

էր: Օլանտ նախապէս նման մետայներ չանձնած էր նաեւ երեք ամբերկացի երիտասարդներու եւ բրիտանացիի մը, որոնք եւս զսպած էին գինեալը:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

### ՄԱԿ-Ը ԸՆԴՈՒՆԵՑ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԴՐԱ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ԲԱՆԱԶԵԻ

Սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիազուգար նիստում կոնսենսուսով ընդունուեց Հայաստանի ներկայացրած «Ցեղասպանության յանցագործության գոհերի չիշատակի եւ արժանապատուության եւ այդ յանցագործության կանխարգելման միջազգային օր» խորագրով բանաձեւ: Նախաձեռնությունը բխում է ս/թ. Մարտի 27-ին ժնեւում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 28-րդ նստաշրջանում Հայաստանի կողմից ներկայացրած եւ միաձայն ընդունուած ցեղասպանության կանխարգելման վերաբերեալ բանաձեւի դրոյթներին: Սույն բանաձեւը գալիս է լրացնելու Հայաստանի շարունակական ջանքերը՝ խթանելու ու համախմբելու ցեղասպանության ոճրի դէմ ուղղուած միջազգային գործողությունները:

ՄԱԿ-ի 84 համահեղինակ անդամ պետությունների անունից ներկայացնելով բանաձեւը՝ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Զոհրապ Մնացականեանը նշեց, որ ցեղասպանությունը մարդկության գործած ամենասարսափելի ոճրագործությունն է, որը դարձել է միլիոնավոր մարդկանց նահատակման պատճառ: «Մենք հաւատացած ենք, որ միջազգային օրը կարեւոր հարթակ կը հանդիսանա գոհերի չիշատակման միջոցով՝ ապագայում այդ ոճրագործության կանխարգելման համար», - շարունակեց դեսպան Մնացականեանը:

Բանաձեւով միջազգային օր է հռչակուած Դեկտեմբերի 9-ը՝ 1948թ. Ցեղասպանության յանցագործության կանխարգելման եւ պատժի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման օրը:

Վերահաստատելով 1948թ. կոնվենցիայի նշանակությունը, որպէս ցեղասպանության յանցագործության կանխարգելման ու պատասխանատուության միջազգային

կարեւորագոյն փաստաթուղթ, Գլխավոր ասամբլեայի բանաձեւն ընդգծում է ցեղասպանության գոհերի չիշատակման անհրաժեշտությունը, ինչը կարեւոր դերակատարություն ունի կանխարգելման գործում: Բանաձեւով վերահաստատուած է իւրաքանչիւր պետության պատասխանատուությունը՝ պաշտպանելու բնակչությանը ցեղասպանությունից եւ դրա հրահրումից: Բանաձեւում նաեւ ամրագրուած է ցեղասպանության անպատժելիության դէմ պայքարը՝ որպէս կանխարգելման կարեւորագոյն գործոն:

Բանաձեւը խրախուսում է պետություններին, միջազգային կազմակերպություններին եւ քաղաքացիական հասարակությանն ու անհատներին նշել միջազգային օրը՝ ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի, ցեղասպանության դէմ պայքարի եւ կանխարգելման հարցում դրա նշանակության բարձրացման ու իրազեկման նպատակով, ինչպէս նաեւ յանուն ցեղասպանության գոհերի չիշատակի ու յարգանքի:

Իր ելույթում դեսպան Մնացականեանը նաեւ նշեց, որ միջազգային օրուայ հռչակման միջոցով փորձ է արուած վարձահատուց լինել ցեղասպանության գոհերի ճակատագրի նկատմամբ անցեալում ցուցաբերուած անտարբերության համար, եւ յաւելեց, որ ժխտողականությունը նաեւ խոցում է ցեղասպանությունը վերապրածների սերունդներին, եւ խաթարում է հաշտեցմանն ուղղուած իրական ջանքերը: Դեսպանն անդրադարձաւ անդամ պետությունների պատասխանատուությանը՝ կառուցելու այնպիսի ամուր մի համակարգ, որը կը սանձի ապագայում հնարուոր ցեղասպանության ոճրագործներին: «Դա կը լինի ցեղասպանության գոհերին յարգանքի տուրք մատուցելու լաւագոյն ճանապարհը», - իր ելույթն ամփոփեց Զոհրապ Մնացականեանը:

### ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐ ԶԱԿԱՅԱՅ ԵՐԹ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ՊՈԼՍՈՅ ԶԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՋ

Թուրք ազգայնականներ այսօր եւս երթեր կատարած են Պոլսոյ հայկական թաղամասերուն մէջ: Մեծադիր դրօշներ բռնելով եւ հայերու ու քրիստոնէական հասցիներ վանկարկուծներ ընելով, անոնք անցած են յատկապէս հայկական Քուրթուլուշ, Շիշլի եւ համեմատաբար նուազ թիւով հայերով բնակեցուած Պէշիկթաշ թաղամասերէն: «Արեւելք»-ի տիրապետած

տեղեկություններուն համաձայն, կարգ մը թաղամասերու մէջ հայեր զգուշութեան առ ի հետեւանք անջատած են տան լոյսերը: «Արեւելք»-ին հասած սոյն տեսանիւթը առնուած է քիչ առաջ եւ տեսագրուած է Շիշլի-Պոմոնի շրջանին մէջ, որ կը գտնուի Քուրթուլուշ թաղամասին մօտակայքը: Պիտի շարունակենք հետեւիլ Պոլսոյ զարգացումներուն:

### Արեւմտեան Թեմի Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն  
Համայնքի շատ մը պատկառելի անձեր՝ հիմք ունենալով կրթական մարզէն ներս Թեմիս «Յովսէփեան» դպրոցին ունեցած յաջողություններն ու ձեռքբերումները: Առաջնորդ Սրբազանի կողմէ ստորագրեալ 18 Մայիս 2015 թուակիր պաշտօնական նամակը սակայն, ցաւ ի սիրտ, չընդունուեցաւ նոյն բարեհաջողութեամբ: 9 Յունիս 2015-ին ստացանք Թէքէեան Մշակութային Միութեան Նախագահի կողմէ ստորագրեալ պատասխան նամակը 4 Յունիս 2015 ամսաթիւով, ուր ԹՄՄ Հոգաբարձութիւնը անվա-

տահանութիւն կը յայտնէ Թեմին եւ չի տեսնէր դպրոցը բաց պահելու երաշխիքներ: Այս պատճառաբանութեամբ ԹՄՄ Հոգաբարձութիւնը կը մերժէ Արեւմտեան Թեմին առաջարկը եւ դպրոցին շէնքը կը վաճառէ այլ կազմակերպության՝ գլուշուկայական հաշիւներէ ելնելով: Կը տարածենք այս հարորդաբարձութիւնը, որովհետեւ գաղութը իրաւունք ունի գիտնալու եղելութիւնը եւ այն, որ Սբ. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ եւ Արեւմտեան Թեմին երկարած փրկութեան ձեռքը, բարի կամքը եւ դպրոցը պահելու յանձնառուութիւնը ստորադասուեցաւ շուկայական շահին, յարդիւնս որու օտարուեցաւ հայ դպրոցը եւ սուրբ հայ աշակերտը:

### ԱՄՆԻ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ Միաձայնութեամբ կը Հաստատու Թանգարանի Կառավարման Խորհուրդ

ԱՄՆի Արեւմտեան Շրջանի Հայոց Ցեղասպանության 100ամեակի Յանձնախումբը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թանգարանի կառավարման խորհուրդի կազմաւորումը:

Ժողովը որ տեղի ունեցաւ Օգոստոս 26, 2015ին, Հայոց Ցեղասպանության 100ամեակի Յանձնախումբի ներկայ անդամները, միաձայնութեամբ կողմ քուէարկեցին թանգարանի կառավարման խորհուրդի ստեղծմանը որ պիտի շարունակէ իրականացնել Հայոց Ցեղասպանության 100ամեակի յանձնախումբի կողմէ սահմանուած թանգարանի ծրագիրը:

Թանգարանի կառավարման խորհուրդի անդամ իննը կազմակերպություններն են՝ Հիւսիսային Ամերիկայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարան, Ա.Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարան, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, Հայ Մշակութային Հիմնարկութիւն - Ա.Մ. Նահանգներու Արեւմտեան Շրջան, Հայ Աւետարանական Համայնք, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն - Ա.Մ. Նահանգներու Արեւմտեան Շրջան, Հայ Օգնութեան Միութիւն - Ա.Մ. Նահանգներու Արեւմտեան Շրջան, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն, Նոր Օր Բարեգործական Հիմնարկութիւն:

ԱՄՆի Արեւմտեան Շրջանի Հայոց Ցեղասպանության 100ամեակի Յանձնախումբը

Հիմնադրուած է, Օգոստոս 9, 2012ին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ, Ապրիլ 24, 2015ին, համակարգելու համար, Հայոց Ցեղասպանության 100րդ ամեակի չիշատակության նախապատրաստման գործունէութիւնը, ինչպէս նաեւ՝ նպատակ ունենալով, հասարակութեան հասկացողութիւնը եւ ըմբռնումը արթուն պահելու համար, Հարաւային Քալիֆորնիայի մէջ կառուցելու թանգարան, կրթական եւ մշակութային կեդրոն եւ Գլենտէյլ քաղաքին մէջ յուշարձան մը, նուիրուած՝ ցեղասպանության գոհերու չիշատակին:

### ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ԹՈՒՐԲ ԴԵՍՊԱՆԻՆ

Մեքսիկայում Հայաստանի դեսպան Գրիգոր Յովհաննիսեանը պատասխանել է թուրք դեսպանի նամակին, որում վերջինս իր բացասական վերաբերմունք էր յայտնել «Միներիա» սիմֆոնիկ նուագախմբի համերգի կապակցութեամբ:



Մեքսիկական noticias.terra.com.mx կայքը ներկայացրել է ՀՀ դեսպանի նամակի բովանդակությունը, որն էլ ներկայացնում ենք մասնակի կրճատումներով:

«Օգոստոսի 23-ին ներկայ եմ գտնուել «Միներիա» սիմֆոնիկ նուագախմբի՝ Նեցահուալկոյոտլ համերգասրահում տեղի ունեցած համերգին, որի ժամանակ աշխարհահռչակ ջութակարուհի, Գրեմմիի մրցանակակիր Քիմ Քաշքաշեանը ներկայացրել է յայտնի հայ կոմպոզիտոր, Գրեմմիի մրցանակակիր Տիգրան Մանսուրեանի «Երեք արթի» ստեղծագործությունը (Երգել է պատուհանի մօտ՝ նայելով Արարատ լեռանը):

Սակայն «Միներիա» սիմֆոնիկ նուագախմբի գլխավոր դիրիժոր, մասնաոր կառլոս Միգել Պրիետոյին ուղղուած՝ Մեքսիկայում Թուրքիայի դեսպան Օղուզ Դեմիրալիի՝ ատելութեամբ լի նամակի մասին տեղեկանալով՝ ստիպուած եմ արձագանքել: Բաւականին զարմացած եմ, որ Արարատ լեռան չիշատակումը նշանաւոր երաժիշտ-

ների կողմից կարող էր այդքան կատաղի արձագանք առաջացնել: Պէտք է չիշեցնեմ դեսպան Դեմիրալիին, որ շատ վաղուց, երբ թուրքերը դեռ նոր էին հասել Անատոլիա 1000-ական թուականներին), Արարատ լեռը արդէն իսկ հայ մշակույթի խորհրդանիշն էր: Իրականում «Արարատ», «Ուրարտու», «Արմենիա» բառերն օգտագործուած էին որպէս հոմանիշներ: Արարատ լեռը նախկինում եւս օգտագործել է որպէս հայոց խորհրդանիշ, ինչը կրկին զայրացրել է թուրքական կառավարութեանը, ինչպէս օրինակ, երբ Արարատը յայտնուել էր հայոց գերբի վրայ: Սակայն ի պատասխան այդ զայրոյթին՝ դեռ անցեալ դարի 50-ականներին Խրուշչովն ասել էր. «Միթէ լուսինը ձերն է», -նամակում գրել է ՀՀ դեսպանը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸՄՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՄՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ՍԵԻԱՆ ՆՇԱՆԵԱՆ.- ԹՈՒՐԹՈՅ ՀԱՐՑԵՐԸ ԿԸ ԼՈՒԾՈՒԻՆ ՄԻԱՅՆ ԷՐՏՈՂԱՆԻ ՀԵՌԱՑՈՒՄՈՎ

«Արեւելք» բացառիկ գրույցը բանտին 7 օրով ազատ արձակուած Սեւան Նշանեանին Հետ:

Դեկտեմբեր 2013-էն ի վեր բանտարկուած Սեւան Նշանեան, որ այսօր 7 օրով ազատ արձակուած է «Արեւելք»ին ըսաւ, թէ «եղած կարգադրութիւնը միայն ինծի չի վերաբերիր այլ բազմաթիւ բանտարկեալներու համար նմանօրինակ կարգադրութիւն եղած է»: Նշանեան նաեւ նկատել տուաւ, որ յետ այսու «բաց բանտային» ուժ-ժիւղով պիտի անցընէ իր բանտարկութիւնը: Ան ըսաւ, որ ցայսօր կը գտնուէր Այտըն նահանգի Սուլթան Հիսար աւանի «Աղլանճա» բանտին մէջ ու յետ այսու պիտի փոխադրուի նոյն շրջանին մէջ գտնուող համեմատաբար աւելի լաւ պայմաններ ունեցող բանտ մը:

Նշանեան խօսելով իր դատաւկան գործին մասին ըսաւ, թէ ներկայ պահու դրութեամբ իր բանտարկութեան ժամկէտը 11.5 տարի է եւ եթէ այդ վճիռին վրայ աւելցուի այլ 6.5 տարուան վճիռ մը ապա բանտարկութեան տարիներուն թիւը կը հասնի 18 տարուան:


Հայագրի քաղաքական բանտարկեալը, որ արգելափակուած է իր հիմնած Շիրինճէ աւանին մէջ ապօրինի շինութիւններ կատարելու անհիմն մեղադրանքով որոշ վրդովմունք յայտնեց, իր հարցին կապակցութեամբ հայութեան ցուցաբերած ընդհանուր անտարբերութեան վերաբերեալ:

«Մեր ընկերները եւ մօտիկ համարուած ծանօթները չկրցան ոչ մէկ ձեռով իմ հարցին մասին լուսաբանումներ տալ: Օրինակ Պոլսոյ «Ակօս» պարբերականը ոչ մէկ տող գրեց իմ բանտարկութեան պայմաններուն մասին եւ այս մէկը մեծ ամօթ մըն է»: Ըստ Նշանեանի իր անկախ ըլլալուն պատճառով է նաեւ, որ ազդու կողմեր տէր չկանգնեցան իր դատին հակառակ անոր, որ քիչ չէ թիւը այն մարդոց որոնք դրական կեցուածք ունին իր հանդէպ:

Հայ մտաւորականը նաեւ ըսաւ, որ հակառակ դժուարին պայմաններուն կը շարունակէ իր մտաւորական աշխատութիւնները բանտին մէջ: Ան նշեց, որ ներկայիս կ'աշխատի Թրքերէն լեզուի պատմութեան նուիրուած հատորի մը վրայ, որ իր նմանօրինակ աշխատութիւններու շարքին 5-րդ հատորը պիտի ըլլայ:

Նշանեան պատասխանելով մեր հարցումին, իր Թուրքիոյ մէջ (բանտ մուտք գործելէն ետք) տպագրուած «Աղըր Քիթապ» («Մանր Գիրք» խմբ. «Արեւելք») գիրքին մասին, ըսաւ, որ հատորը իր վերջին շրջանի հրատարակած յօդուածներուն 1000 էջերէ բաղկացող հաւաքածոն է: Ան նոյնպէս յիշեց, որ իր հատորները Հայաստանի մէջ պիտի հրատարակուին հրատարակախօս՝ Սարգիս Հացպանեանի ճիգերով:

Նշանեան պատասխանելով «Արեւելք»ի հարցումին կապուած Թուրքիոյ այսօրուան զարգացումներուն յարեց՝ «Երկիրը մեծ խենթութեան մը մէջ է եւ իր ճամբան կորսնցուցած: Թուրքիա այսօր դժուար պայմաններու մէջ է ու մարդ չի կրնար կուսակցութիւն ձևաւորել: Ան չի բացառեց, որ Թուրքիան մտնէ համընդհանուր պատերազմի մը մէջ: Ըստ Նշանեանի Թուրքիա այսօր հիւանդ է եւ այդ



հիւանդութիւնը կապ ունի միջին արեւելքը հարուածող մեծ հիւանդութիւններուն հետ: Անոր կարծիքով Թուրքիոյ համար այսօր կարեւորագոյն հարցը երկրի նախագահ Էրտողանի հեռանալն է: «Էրտողանը շատ դրական եւ ճիշդ բաներ ըրաւ այս երկրին համար բայց այսօր ան սպառած է եւ պէտք է հեռանայ: Անոր իշխանութիւնէն հեռացումը դուռը կը բանայ Թուրքիոյ մէջ նոր հանգրուանի մը սկիզբին, որը պիտի ըլլայ լուծումներուն հանգրուան մը: Էրտողանի հեռացումը մեծապէս կը թեթեւցնէ ծանր վիճակի մատնուած Թուրքիան: Էրտողան 14 տարի է ի վեր կ'իշխէ Թուրքիոյ մէջ եւ անոր պէս զօրամուլ մարդ մը պէտք է վայրկեան առաջ հեռանայ իշխանութիւնէն: Էրտողանը այսօր Թուրքիոյ մեծագոյն բրոպլէմն է» եզրակացուց Սեւան Նշանեան: Աւարտին խօսելով իր բանտարկութեան հանգամանքներուն

### ԿԱՐՕ ՓԱՅԼԱՆ ՀԻՊ-Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՍԵԿՆԱԾ Է ԾԻՋՐԷ ԲԱՂԱՔԻՆ ՊԱՇԱՐՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Քրտամէտ ՀԻՊ կուսակցութեան հայագրի երեսփան Կարօ Փայլան կուսակցութեան պատասխանատուներու պատուիրակութեան մը հետ մեկնած է ճիզրէ (կամ ձէզիրէ): Պատուիրակութեան մաս կը կազմեն ՀԻՊ անդամ 2 նախարարներ եւ խորհրդարանի անդամ շուրջ 30 երեսփոխաններ: Մինչ ապահովական մարմիններ արգելք հանդիսացած են պատուիրակութեան անդամներուն քաղաք մուտքին, պաշարման տակ եղող

քաղաքը յայտնուած է մարդկային ծանրագոյն պայմաններու մէջ: Տարբեր աղբիւրներ կը յայտնեն, որ աւանին մէջ կը գտնուին PKK-ի անդամ աւելի քան 300 զինեալներ եւ պաշարման հետեւանքով ջուրի եւ սնունդի լուրջ տագնապներ կան: Նշենք, որ վերջին շրջանին PKK -ի զինեալներուն եւ թրքական ապահովական մարմիններուն միջեւ արձանագրուած բախումները ծանր դրութիւն ստեղծած են երկրին մէջ:

մասին Նշանեան ըսաւ «Իմ դէմ եղածը անիմաստ, սարսափելի եւ ապուշ վճիռ մըն է: Մինչ Շիրինճէի մէջ իմ ստեղծած հաստատութիւններս հիացմունքի եւ մեծ չաջողութեան կ'արժանան անդին նոյն հաստատութիւնները ստեղծողը կրնայ մինչեւ 15 տարի բանա-

տարկուիլ:» Բացառելով Թուրքիայէն ընդմիջապէս հեռանալու մասին խօսքերը Նշանեան նկատել տուաւ, որ Թուրքիոյ իշխանութիւններուն ուզածը արդէն իր երկրէն հեռանալն է, բայց ինք այդ քայլին պիտի չդիմէ ինչ ալ ըլլան հանգամանքները:

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**  
 և «Քաջ Նապար» հանդէսն ու հեռուստաժամը ներկայացնում է

**16-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ**

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՊԻ ԲԻՄՆԱԳՐԱՄԻ, ԲՆՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲՆՇՄԱՆՂԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԵԱՆ

**Կիրակի, Սեպտեմբեր 27, 2015, ժամը 3-12:00**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**  
 and "KACH NAZAR" Magazine and TV Show  
 Presents

**16th ANNIVERSARY TELETHON**

**ON SUNDAY, SEPTEMBER 27, 2015**

**FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES**

Our 2015-2016 Project is to restore and renovate a Kindergarten in Gyumri, Armenia. Upon completion of our project, the kindergarten will be named "7 Agnells" in memory of the Avetisyan family whose members were brutally massacred back in January, 2015.

Mail your check Please to, (A.A.O.C. FUND,) P.O.BOX 250038, GLENDALE, CA 91225  
 Tel: 818-246-0125 • 818-239-6880 818-292-9619  
 E-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com  
 Non-Profit Organization. a Tax Exempt 501 (c) 3 Charity.



### ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱԶԱՐԻ ՅՈՎԻԸ

Իմ լուծս առե՛ք դու՛ք ձեր վրայ եւ ինձա՛մ սորվեցե՛ք, թէ հեզ եմ եւ խոնարհ եմ սրտով, ու ձեր ներքին խաղաղութիւնը պիտի գտնե՛ք դու՛ք: Որովհետեւ քաղցր է իմ լուծս, եւ բոնս թեթեւ:

Մատթ. ԺԱ. 29



#### ՈՍԿԱՆ ՄԻՒԻԹԱՐԵԱՆ

Կաթողիկէ Եկեղեցւոյ հովուապետը՝ Ֆրանսիս Պապ, անցեալ Կիրակի օր, նկատի ունենալով գաղթականներու դիմակալած անմարդկային դժուարութիւններն ու դժբախտութիւնները, Ս. Պետրոսի Հրապարակին վրայ հազարաւոր ուխտաւորներու ներկայութեան կողմէ սամբոյճ եւրոպայի տարածքին կաթողիկէ բոլոր համայնքներուն, վանքերուն եւ կուսանոցներուն, որպէսզի իրենց առաքելութեան եւ ծառայութեան մեծագոյն օրինակը հանդիսանայ Մայր Թերեզան, որ հոգաց եւ խնամեց Հնդկաստանի լքեալներն ու աղքատները. «Այսօր տասնեակ հազարաւոր անօդակազմային գաղթականներ կը փորձեն փախչիլ իրենց երկրներէն, ուր միայն կայ մահ, տառապանք եւ անօթութիւն: Այսօր անոնք նոր յոյսերով ճամբայ ելած են դէպի նոր կեանք: Աստուածաշունչը մեզի կը յորդորէ ըլլալ կարեկցող անկեալներուն, լքեալներուն, ու յոյս ներշնչել անոնց»:

Համամարդկային քրիստոնէական իր կողմէ գործնական քայլերը արդէն տեսած էինք նախապէս: Քահանայապետը կը հաւատայ այն վեհ սկզբունքին, թէ «պէտք է իրագործել, կատարել՝ այն ինչ որ կը քարոզենք»: Վատիկանի աւագ խօսնակին՝ Հայր Չիրօ Պենետինի-Թինի-Ի (Rev. Ciro Benedettini) համաձայն, արդէն Վատիկանի մէջ ստեղծուած են հանրային ձրի բաղնիքներ անտունիներու համար, ինչպէս նաեւ ձրի վարսավիրանոցներ եւ այլ յարակից բարեսիրական ծառայութիւններ, եւ այս բոլորը՝ Վատիկանի անմիջական հսկողութեան տակ: Կարելի՞ է չնախանձիլ...:

Կարտինալ Անձէլօ Գակնասքօ-ի (Cardinal Angelo Bagnasco) համաձայն, կարելի պիտի ըլլայ պատասպարել 108,000 գաղթականներ Եւրոպայի տարածքին գտնուող 27,000 ծուխերու մէջ, եւ «կը յուսանք իրականութեան վերածել մեր այս փափաքը, որովհետեւ մեր կարելիութեան սահմաններուն մէջ է այդէ» -- կը յայտարարէ կարտինալը, որ շուտով կը պատրաստուի ներկայացնել այս առաջարկը յաջորդ Եպիսկոպոսական Ընդհանուր Ժողովին, որուն նախագահն է երկար տարիներէ ի վեր:

Հիմա հարց տանք մեր

ընթերցողներուն. մեզի ի՞նչ կը պակսի նման քայլի մը դիմելու, երբ աւելի կամ նուազ չափով դէմ յանդիման կը գտնուինք այսօր մեր սուրբահայ գաղթական եղբայրներուն եւ քոյրերուն տագնապալի վիճակին առջեւ, որ այդքան խոր մտահոգութիւն կը պատճառէ համասփիւռ հայութեան: Բարեբախտաբար, լիբանանահայ գաղութը, որ երկար տարիներ ճաշակած էր քաղաքացիական պատերազմի արհաւիրքները, անվարան իր ձեռքը երկարեց տագնապահար սուրբահայութեան իր կարելիութեան սահմաններուն մէջ, համեմատ անոնց հասարակական-ընկերային կարիքներուն, մեղմացնելու եւ թեթեւցնելու անոնց ցաւերը: Նոյնը ըրաւ նաեւ ամերիկահայ գաղութը, յառաջացնելով բոլոր հոսանքներէ բաղկացած սուրբահայութեան օժանդակող մարմին մը:

Սակայն, բացի վերեւ նշուածէն, անհրաժեշտ է ստեղծել համագային գորաշարժ՝ որուն առաջին կարգին վրայ պէտք է կանգնի Հայց. Առաքելական Եկեղեցին, այս պարագային առաջին հերթին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Նոյն այս նպատակին մասնակից պէտք է դառնան եւ ներգրաւուին այս ազգօգուտ աստուածահաճոյ աշխատանքին մէջ Հայաստանի պետութիւնը եւ բարեսիրական մեր բոլոր կազմակերպութիւնները, մասնաւորաբար Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր նիւթական լայն կարողութիւններով, առանց դաւանական եւ քաղաքական պատկանելիութեան խտրականութեան:

Դժբախտաբար տակաւին՝ Միջին Արեւելքի քաղաքական մօտալուտ հորիզոնին վրայ յուսադրիչ երեւոյթներ չկան յայտարարելու, որ սուրբահայութեան տագնապը իր աւարտին հասած է: Հակառակ այս ճշմարիտ իրողութեան, պէտք է մտածել նաեւ վերաշինութեան աշխատանքներու մասին, որովհետեւ սուրբահայ գաղութը հայաստանամերձ պատմական գաղութ մըն է, որ տարիներու ընթացքին տուած է որակաւոր մարդոյժ մեր հայապահպանման բոլոր ծառայական աշխատանքներուն մէջ:

Նկատի ունենալով սուրբահայ

Շար.ը էջ 17

### ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄՐՈՎ ԻՏԵԱԼՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Մայր Հայաստանի անկախութիւնը երկուսքով ծնուեց, խանձարուրուեց աչքերը փակ, ականջները անլուր, մարմինը ձիգ, մանկական սիրտն էր բաբախում հազիւ լսուող թոյլ ու նուազ: Մեր ժողովուրդը երկա՛ր տարիներ սպասում էր նրա ծննդեան՝ անցեալի մաքառումների արդիւնքով սաղմնաւորուած պահանջով՝ ցոյցերով, բողոքներով եւ գոհեր նուիրաբերելով: Ազգի ժողովների տանը, ժողովրդի պարագլուխների կողմից, միահամուռ ու միակամ հռչակուեց անկախութեան ծննդեան թուականը, որն էր՝ 1991 թիւ, Սեպտեմբերի 21, ոնց անում է պատասխանատու բժիշկը մատենանի մէջ դրոշմելով եւ կնքելով երեխայի աշխարհամուտը: Անկախութեան ծարու Մայր Հայաստանի գաւակները բոլոր թէ՛ երկրում եւ թէ՛ արտերկրում հանդիսութիւններով ու միջոցառումներով, բարձրաձայնեցին յանուր աշխարհի Ծնունդը Հայաստանի Անկախութեան եւ այսպիսով հիմք դրուեց երրորդ հանրապետութեան, ծածանուեց եռագոյնը՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն պարծանք եւ յուրախութիւն ողջ հայութեան:

Դիւրասահ չեղաւ կեանքի ընթացքը մեր նորահրաշ մանուկի՝ հայոց անկախ հանրապետութեան, իրար չաջորդող ահաւոր դժուարութիւններ դանդաղեցրեցին նրա առողջ առաջընթաց-վերելքը, ինչպէս ասաց՝ սէրը մինչեւ չի բոլորում տառապանքներ, նա չի դառնում իսկական բիւրեղեղ սէր: Մեր նոր հանրապետութեան ճամբան անցաւ լեռնային կածաններով արտաքին թշնամի հարեւան գոյգ երկրների սաղրանքներով նիւթուած: Այդ պոռճուր Մայր Հայաստանը՝ մեր բոլորիս սրտի հատոր լեռնաստանը, ահարկու աղէտների առջեւ կանգնեց՝ երկրաշարժ, պարտադրուած պատերազմ, ատրպէյճանից արտաքսուած փախստականների զանգուածային հայ աղէտեալներ, շրջապատուած տնտեսական ճամբաներ, ներքին կառավարման ոչ փորձառու ղեկավարներ եւ այլն: Այս լեռ ծանրութիւնները ու ճնշումները որոշ չափով յաղթահարած մեր դէմ յանդիման է կանգնած Հայաստանի երիտասարդ պետականութիւնը իր քսաներեք տարիների վիճակացոյց տոմարներով:

Հպարտ ենք, որ Հայաստանի հանրապետութիւնը բոլորում է իր քառորդ դարեան ազատ կամքի գոյատեւման տարիները, մանուկի, երեխայի վիճակից դուրս եկած դարձել է երիտասարդ, բայց ոչ չափահաս...: Այս տարիների ընթացքում կարեւոր ձեռքբերումներ են կատարուել, կարեւորագոյնը՝ հայկական բանակի կազմաւորումը, Արցախի ազատագ-



րումը, պետութեան ամրապնդումը, վարչական եւ ղեկավարման ինստիտուտների կեանքի կոչում-կայացումը եւ այլ տեսանկի արդիւնքներ, սակայն եղել, կան, մնում եւ կատարուում են սխալներ՝ անլուրջ ու շաղրութիւն ազգային ռազմավարութեան գաղափարախօսութեան նկատմամբ, արտագաղթի թոյլատրելի հոսքը, ժողովրդի սոցիալական ցաւալի վիճակը, մեր դարաւոր մշակութի եւ սովորութեանց անգունացումը, արդարադատութեան նուազ ընթացքը այլ եւ այլ հայրենասէր հայի սիրտը ցաւեցնող եւ հոգին տանջող թերացումներ:

Յոյսեր ենք փայտալուծ մեր սրտերում չմոռանալով քննադատումն ու զգուշացումը յանուն մեր ժողովրդի բարօր եւ պայծառ ապագայի, մեր ժողովրդի ձգտումների եւ նպատակների իրականացման ճամբին տեսնել Հայաստանի կառավարութեան յառաջխաղացումները՝ դէպի ցեղասպանութեան եւ մեր արդար իրաւունքների ճանաչման եւ ձեռքբերման ի խնդիր, ի մասնաւորի Արցախ աշխարհի ազատութիւնն ու ազատագրուած տարածքների որեւէ մի գիջում, Հայաստան եւ Արցախ միասնականօրէն լրացնում են ճախրող արծուի գոյգ թեւերը:

Գալով Հայաստան-Սփիւռք տարանջատման, ինչո՞ւ Սփիւռքը մինչեւ հիմա իրեն դիտորդի տեղ դրած դուրսէն կը դիտէ, դուրսէն կը քննադատէ կամ կը հիանայ եւ այլն, ես չեմ հասկնար: Գործելու դաշտը հոս է, թէկուզ դուն այդ տեղը, բայց այստեղի համար պիտի գործես, հասկցա՞ր: Հայութիւնը երկու բանի իրաւունք ունի: Առաջին՝ 1915-ին մեզի մեր հայ ըլլալուն համար ջարդեցին եւ ոչ թէ այս կամ այն կուսակցութեան կամ համայնքին պատկանելու համար: Քու պապը ջարդուած է եւ Սփիւռքի մէջ քու գտնուիլդ քու ընտրութիւնդ չէր: Քու հայրենիքդ գաւթուած է եւ երբ այսօր անոր մէկ հատուածին վրայ պետական միաւոր ստեղծուած է, դուն ատոր տէրն ես: Ուրեմն մենք այստեղ տեղ ունինք եւ ոեւէ մէկը չի կրնար մեզի թելադրել թէ դուք ո՞վ էք այստեղ: Ինձի կ'ըսեն դուն Ֆրանսայի քաղաքացի ես, դուն իրաւունք չունիս խառնուելու: Իրենց կ'ըսեն, դուն ալ Ռուսաստանի քաղաքացի ես եւ հոնկէ ի՞նչպէս ինքզինքի իրաւունք կու տաս ուզածդ թելադրելու: Հայաստանի քաղաքացիութիւնը իմ իրաւունքն է եւ ես վաստակած եմ ատիկա: Երկրորդ՝ Արցախեան ազատամարտը ցոյց տուաւ, որ ազգի երեք հատուածները կարող են միաւորուիլ: Հայաստան, Արցախ եւ Սփիւռք: Երեք տարբեր տեղեր հասակ առնողները միաւորուեցան նոյն խրամատին մէջ: Այդ յաղթանակը բոլորինս է: Անպայման չէ, որ իսահակը գտնուի այդ խրամատին մէջ, բայց իսահակը գումար ուղարկեց, որ ես գուլպայ, գլխարկ, բաճկոն եւ այլն ունենամ: Բանակին անհրաժեշտ շատ ու շատ բաներ ու գումարներ դուրսէն եկան: Ու քանի որ դուն քու բաժինը բերի այդ յաղթանակին, ուրեմն տէր կանգնիր անոր: Հայաստանի մէջ մենք պէտք չէ մեզ տեսնենք զբօսաշրջիկի կարգովիճակով: Հայաստանը միայն Գառնի, Գեղարդ, էջմիածին չէ, այլ Ազրպէյճանի հետ երկար սահման ունի, որտեղ իմ երեխան, քու երեխան, մեր ժողովուրդի երեխաները կանգնած են գէնքը ձեռքերնուն: Մեր հայրենիքը այսօր գինադադարեան իրավիճակի մէջ ապրող պետութիւն է եւ սա պէտք է հասկնալ: Իսրայէլի հետ բաղդատութիւնը ատոր համար է: Ես կոչ ուղղած եմ եւ հիմա ալ կը կրկնեմ, որ իւրաքանչիւր հայ, որ կը գտնէ որ ասիկա իր երկիրն է, ինքն ու երեխան պիտի գան այստեղ, որ ամէն մէկը իր հասակակիցին հետ շողովելով դրական տարբերութիւն մը ստեղծէ եւ իրավիճակ փոխէ:

3. Մէկ այլ բաղդատական Իսրայէլի հետ: Երբ 1948-ին անկախութիւն հռչակեցին, երկրին մէջ 800,000

իրեայ կար: 20 տարուան ընթացքին, այդ թիւը դարձաւ 2,800,000: Հայաստանի անկախութեան 20 տարիներուն մեր ժողովուրդի կէտը արտագաղթեց, ի՞նչու:

Պ. Պատասխանս մէկն է: Զուլը գլխէն կը հոտի: Եթէ ընտանիքի հայրը իր գաւակներուն մասին չի մտածեր, անոնց ճակատագիրը անյայտ կ'ըլլայ: Կը նշանակէ, որ հայրը այդ օճախը չի սիրեր, գաւակները չի սիրեր եւ շահագրգռուած է միայն գանոնք օգտագործելով: Այստեղէն արտագաղթը սոցիալական պատճառներ չունէր սկիզբը, թէեւ հոն հասած է հիմա: Պարզապէս տիրող անարդարութիւնն էր պատճառը, որ իսկեց նուիրեալները: Հսկայական ներուժ դուրս եկաւ շէնցնելու օտար երկիրներ: Ի՞նչու անոնք իրենց տաղանդները պիտի չի ծառայեցնէին սեփական հայրենիքի բարգաւաճման: Իշխանութիւններն են պատճառը միայն: Դժբախտութիւնը հոն է, որ սովետական տարիներուն քաղաքացիական հասարակութիւնը չէ գարգացած եւ մարդու տեսակը վախորած հպատակ կարգավիճակով է, որ երբ դժուարութեան կը հանդիպի, կը նախընտրէ ճամպուրակները հաւաքելով մեկնիլ, որը մնացողներուն գործը աւելի կը դժուարացնէ: Գալով իսրայէլին, անիկա ազգային տեսլական ու աշխարհայեցողութիւն ունեցող երկիր է, որու ներքին թէ սփիւռքեան հատուածները շարժապուած միասին կը գործեն: Մեր մօտ դժբախտաբար այդպէս չէ: Միլիոններ չափշտակած մարդը տգիտաբար կը փորձէ իր թելադրանքները պարտադրել, քան թէ ազգին ու ժողովուրդին օգտակար դառնալ ու երկիրն մէջ աշխատատեղեր ստեղծել: Հայ ժողովուրդը պէտք է հասկնայ, որ գիտակցի, պահանջկոտ եւ իր ոտքի վրայ կանգնած տարրի ներգաղթով է, որ պիտի ապտակէ այս իշխանութիւններուն: Իսրայէլի մէջ սփիւռքէն եկածները իրենց կշիռը ունին եւ կրնան գլխաւոր երկու ուժերէն մէկուն կամ միւսին իշխանութեան գալուն նպաստել: Ես կ'երագեմ, որ Հայաստանի մէջ սփիւռքահայերու քանակը այնքան շատնայ, որ կարենանք նոյնը հոս ընել: Հայաստանի երազով ապրած եւ մահացած հօրս տեսլականն էր ասիկա եւ ես պիտի չի թողնեմ, որ ոեւէ մէկը այդ իրաւունքը ինձմէ իսկ: Ատոր համար պայքար է պէտք: Ես եմ այս երկրի տէրը: Այս պանդիտութեան իրավիճակը որքա՞ն պիտի շարունակուի, չեմ հասկնար: Ես դեղատոմս ունիմ Սփիւռքին համար. պէտք է իւրաքանչիւր սփիւռքահայ ընտանիքէ մէկ հոգի մշտական բնակութեամբ տեղափոխուի այստեղ եւ դուք՝ բոլորդ ականատես կ'ըլլաք հրաշքի մը, որ բոլորիդ, բոլորիս դարերու երազանքի իրականացման առաջին լուրջ քայլն է: 1990 թուականէն ի վեր մշտական այստեղ ապրելով, կրցած եմ իմ ամբողջ գերդաստանիս այս երկրի հետ կապել: Իմ ընտանեկան պարագաներուն մէջ շատ քիչերն են, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի հետ կապ չունենան:

3. Վերջին հարցում մը: Իտէլական ի՞նչ իրավիճակի մէջ կ'ուզէք տեսնել Հայաստանը 20 տարիներ անց միայն իտէլիստ որքանը կրնանք գործնականօրէն իրականացնել:

Պ. Պատասխանս կրնայ տարբերակ թուիլ, բայց ասիկա այսօր Սփիւռքի մէջ ապրող հայութիւնէն է կախեալ: Եթէ Սփիւռք չունենա-

լինք, բոլորովին այլ պատասխան կու տայի: Սփիւռքը մեր ամենամեծ ներուժն է, մեր քարիւղն է, մեր հարստութիւնը: Եթէ Սփիւռքը կարենայ իր ազգային ինքնութեան գիտակցման դրսեւորումը իրականացնել, ապա Հայաստանը, ինչպէս ըսած եմ, Զուլեցրիային կ'անցնի եւ Իսրայէլն ալ մեզի կը նախանձի: Բայց միայն եթէ նպատակաւայց ըլլայ այդ ցանկութիւնը իրագործելու: Բայց դժբախտաբար իմ տեսածով, ոչ Սփիւռքի կառուցները եւ ոչ ալ Սփիւռքի հետ առնչուող Հայաստանեան հատուածը այս ուղղութեամբ չեն աշխատիր: Ուրեմն պիտի ասոր հակառակ կողմէն մօտենանք: Ես կ'երագեմ, որ 20 տարի անց Հայաստանը դառնար ինքնաբաւ մէկ պետութիւն, որ կախեալ չըլլար ասկէ անկէ եւ իր տնտեսութիւնը, իր քաղաքականութիւնը, իր գիտութիւնը հիմնէր իր ժողովուրդի շահերէն մեկնելով: Բայց այս երազը այդքան ալ իրատեսական չէ, մեկնած տարածաշրջանի մեր դիրքէն: Սակայն եւ այնպէս կարելի է «քոմբլեմենթար» (լրացուցիչ) քաղաքականութիւն վարել: Իրանի հետ իմ յարաբերութիւնները այնպէս կը մշակեմ, որ Ռուսաստանին չի հակասէ եւ հակառակը: Ես ընդունակ եմ այդ ընելու, որովհետեւ իմ դիրքը այդ կ'ընձեռնէ: Գանձի նման խաչմերուկային դիրք ունիմ: Պատկերացուցէք, Ռուսաստան, Հայաստան, Իրան, Հնդկաստան, Չինաստան այդ առանցքը իրար կապողն են ես: Ատոր դիմաց կան ԱՄՆ, Իսրայէլ, Եւրոպական Միութիւն, որ այս առանցքը իբրեւ պատ իր առջեւ կը տեսնէ: Նկատի ունենալով, որ մենք այս բոլորի մէջ ներկայութիւն ենք, եթէ մեր ներուժը ճիշտ գործածելու ըլլանք, ապա կրնանք ազդեցութիւն գործել հոն ուր որ կ'ուզենք, ի շահ Հայաստանի պետութեան լինելիութեան: Ասիկա իմ երազանքն է:

Սփիւռքը պէտք է գիտակցի, որ չի կրնար առանց Հայաստանի գոյատեւել, եւ Հայաստանն ալ պիտի գիտակցի, որ առանց Սփիւռքի ներուժէն օգտուելու, իր ապագան մութ է: Երբ այս երկու հատուածները հասկնան, որ առանց մէկը միւսին երկուքին ալ ապագան վտանգուած է, պէտք է յօժարակամ գործակցին իրարու հետ: Քանի որ աշխարհացրիւ հայերուս միայն այս կտոր մը Հայաստանը մնացած է, ուրեմն բոլոր հայկական համայնքները Երեւանակեդրոն պէտք է ըլլան: Իսրայէլը այդ հարցը լուծեց անկախութեան տիրանալիս ետք: Հիմա, ի՞նչու համար հայը պիտի կարողանայ աշխարհի որեւէ տեղ իր ընդունակութիւնները դրսեւորելով մեծ յաջողութիւններու հասնիլ, բայց պիտի չի կրնայ նոյնը ընել իր հայրենիքին մէջ: Սա կը նշանակէ, որ ոչ թէ երկիրն է աղքատ, այլ՝ երկրի հարստութիւնները մի քանի մարդ կը գրպանեն եւ խեղճ ու կրակ ժողովուրդին կ'ուզեն բռնաճնշումով իշխել, քաղաքական, տնտեսական եւ գիտութեական » յօդարիք« (սակաւապետական) համակարգով: Ես պէտք է կազմաքանդեմ ասիկա, որ իմ երկրի մէջ չի հայը եւս, կարենայ իր յատկանիշերը դրսեւորել: Ատոր համար իմ նման մտածողներու ժամանակը պէտք է գայ: Ով կը հաւատայ այս երազանքին կամ տեսլականին, ան է որ պիտի նպաստէ վաղուան գալիքին:

(Վերջ)

### ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (15)

## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՏԱՐԱՅԱՍՏԱՆԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

**ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒՆԵԱՆ**  
(Շարունակում և նախորդ թիվում)

1072-ին Սելճուկները Անիին ծախեցին Քիլիկյան ցեղախումբի մը, Շատտատիտներուն, որոնք չարաբերաբար աւելի մեղմ էին հայերուն նկատմամբ: 1199 թուականին, Վրաստանի թամար թագուհին գրաւելով Անին զայն յանձնեց իր հայագրի գործարար Զաքարէի եւ մինչեւ 1236 Զաքարեանները իշխեցին Անիի վրայ երբ Մոնկոլները գրաւեցին քաղաքը կողոպտեցին զայն եւ բնակչութեան ահաւոր ջարդ մը տուին: Այդ թուականէն ետք, Զաքարեանները որպէս Մոնկոլ սուլթաններուն վասալները, ժամանակ մը եւս շարունակեցին կառավարել զայն:

14-րդ դարէն ետք, թրքական «Գարա Գոյունլու» ցեղախումբերը եւ Պարսիկները փոխին ի փոխ իշխեցին Անիի եւ շրջակայքին վրայ, մինչեւ որ անվերջ պատերազմներու, աւերումներու եւ կոտորածներու պատճառով հայեր կամաց-կամաց հեռացան շրջանէն եւ Անին ամայացաւ:

Եթէ Բիւզանդիոնի չիմարացած կայսրերը իրենց քիթէն անդին տեսնէին եւ փոխանակ Բագրատունեաց թագաւորութիւնը ջնջելու՝ դաշնակցէին անոր հետ, գինակցէին եւ միասնաբար դէմ դնէին թուրքիկ ցեղերու արշաւանքներուն, այսօր աշխարհի քարտէսը բոլորովին տարբեր կ'ըլլար: Հսկայական, հարուստ Հայաստան մը կուենայինք, քրիստոնեայ յոյներուն դրացի, եւ մեր գինուորական, մշակութային, ճարտարապետական, ճարտարարուեստի, մտաւորական եւ գիտական ստեղծագործ ուղեղներով կ'իշխէինք այդ բազմապիսի հանքերով հագեցած ընդերքով եւ երկրագործական տարածքներով հարուստ աշխարհատարածքին վրայ եւ խորհուրդ կու տայինք Ռուսաստանին, Չինաստանին, Եւրոպային եւ Ամերիկային ինչպէս վերաբերուիլ աշխարհի քաղաքական բեմին վրայ: Մենք կրնայինք Միջին Արեւելքի ամենակարեւոր եւ ամենահզօր պետութիւնը ըլլալ: Թուրքը կը մնար Ասիոյ տափաստաններուն մէջ, մեզի համար դաշտագետիները մշակելու, ոչխար եւ կով արածելու...: Ուրիշներու անմտութեան պատճառով, մենք տուժեցինք, սարսափելի օրէն տուժեցինք:

1878-ին Կարսի շրջանը, Անիի ներառեալ, մտաւ Ռուսական Կայսրութեան տիրապետութեան տակ: 1892-ին, Նիզովաս Մարրի առաջնորդութեամբ եւ Սբ. Պետրոսպոլի Գիտութիւններու Ազատեմիայի հովանաւորութեամբ պեղումներ սկսան կատարուիլ Անիի մէջ: Բագմաթիւ շէնքեր յայտնաբերուեցան եւ հազարաւոր պատմականօրէն թանկարժէք իրեր գտնուեցան: 1918-ի Հայ-թրքական պատերազմներու ժամանակ, մինչ թրքական բանակը կը յառաջանար, հայեր 6000 հնապեղուած, թանգարանային արժէք ներկայացնող իրեր տեղափոխեցին Արեւելեան Հայաստան եւ Յովսէփ Օրբելի կարգադրութիւններով անոնք այժմ մաս կը կազմեն Երեւանի Պետական թանգարանի պատմութեան բաժնին:

1921-ին, թրքիոյ պետական նախարար Ռիզա Նուրի հրամայեց թուրքիոյ Արեւելեան ճակատի հրա-



մանատար Քեագիմ Քարապէքիրին Անիի բոլոր յուշարձանները քանդել եւ «Անին սրբել աշխարհի երեսէն»: Քեագիմ Քարապէքիր իր յուշերուն մէջ կը գրէ որ ինք գորաւոր կերպով ընդգիծեցաւ այդ հրամանին, սակայն Նիզովաս Մարրի պեղումներուն եւ վերականգնած շինութիւններուն փչացումը ցոյց կու տայ որ Ռիզա Նուրի հրամանը գէթ մասամբ գործադրուած է:

Անսալով Անիի պարիսպներուն «հրաւէրին», ճակատնիս բարձր մտանք ներս: Քանի որ Անին եռանկիւնաձեւ է եւ արեւելեան եւ արեւմտեան կողմերէն խոր ձորերով եւ կիրճերով պաշտպանուած, քաղաքի հիւսիսային կողմի պարիսպները ամենամուրներն են: Երբ պարիսպներէն ներս մտանք, երկրորդ գիծի պարիսպներուն շարքին վրայ Բագրատունեաց թագաւորներու խորտա առիւծը մեզի բարեւի կեցած էր: Պաշտպանութեան պարիսպներուն այս երկրորդ գիծը շատ աւելի բարձր էր եւ իրարու բաւական մօտ բազմաթիւ կիսակլոր աշտարակներ պաշտպանութեան գիծը աւելի կը զօրացնէին: Սմբատ թագաւորի կառուցած այս պարիսպները իր յաջորդներուն կողմէ աւելի բարձրացան, հաստցան եւ գորացան, ինչպէս նաեւ նոր աշտարակներով ամրացան: Պարիսպներու վերաշինութեան ծախսերուն մէկ մասը հոգացուած էր Անի քաղաքի մեծահարուստներու կողմէ:

Հիւսիսային պարիսպները գլխաւոր երեք մուտքեր ունէին, Առիւծի Դուռը, Դվինի Դուռը եւ Կարսի Դուռը:

«Առիւծի Դուռ»էն ներս մտանք: Անհաւատալի աւերուածութիւն: Հոս ու հոն քանի մը եկեղեցիներու աւերակներէն եւ կիսափուլ մզկիթի մը քառակուսի միասրէնէն բացի ամէն ինչ քարուքանդ էր: Պարզուած տեսարանը պարզապէս անհաւատալի էր: Գետնի հաւասար, իրարու վրայ պառկած՝ քարակոյտեր ամէն կողմ:

2010 Հոկտեմբերին, Global Heritage Fund-ը Անի քաղաքը դասեց աշխարհի հնագիտական ամենավտանգաւոր 12 վայրերէն մին, որ կրնայ անվերականգնելիօրէն կործանիլ եւ կորսուիլ: 2011 Մայիսին, World Monument Fund-ը յայտարարեց որ Թուրքիոյ Մշակութի Նախարարութեան հետ գործակցաբար սկսած են պեղումներ կատարել Անի քաղաքին մէջ եւ պատմական եկեղեցիներուն եւ այլ շինութիւններուն պահպանութեան եւ վերաշինութեան աշխատանքներուն սկսիլ: Վերջերս մամուլի էջերուն մէջ կը կարդանք որ վերոյիշեալ մարմիններու պեղումներուն շնորհիւ Անիի մէջ յայտնաբերուած են նոր ճամբաներ եւ ընդլատակեալ շինութիւններ: Կը

սպասենք եւ կը հետեւինք պեղումներուն: Հաւանաբար Հայաստանի կառավարութիւնը պէտք է պահանջէ որ հայ դէտեր նշանակուին որպէսզի կարենանք մօտէն հետեւիլ եւ հսկել պեղումներուն:

Քարուքանդ եղած քաղաքին մէջ իշխող գոյնը հրաբխային պագալթ քարի (տուֆա քարին մէկ տեսակը) երանգներն էին - մութ նարնջագոյն, սրճագոյնի գարնող դեղին, կարմրորակ-վարդագոյն, փայլուն սեւ: Ինչ որ «մարդ» կոչուած երկրտանիները չէին կրցած քանդել, երկրաշարժներն ու բնութեան աւերիչ տարրերը ամբողջացուցած էին:

Սբ. Աստուածածին Մայր Տաճարը իր տպաւորիչ տարողութեամբ եւ ճարտարապետական լուծումներով մագնիսացուց եւ իրեն քաջեց մեզ: 989 թուականին Սմբատ Բ. թագաւորի հրամանով, Տրդատ ճարտարապետ սկսաւ կառուցել այս տաճարը եւ 1001 թուականին (ըստ այլ արձանագրութեան մը՝ 1010) հայկական սուրբ շարականներն ու անուշահոտ խունկերը մոմերու պլպլացող լոյսերուն հետ սկսան մատուցուիլ առ Աստուած: Տաճարին լուսանկարները շատ տեսած էի, բայց անոր վեհութիւնն ու տարողութիւնը զգալու համար, անպայման պէտք է ողջ աչքերով տեսնել զայն: Ներքին, զիրար գրկող, իրարու փակած սիւները եւ կամարները նորութիւն էին այն ժամանակ: Քանի մը դար ետք այս ոճը (Կողիկ) պիտի տեսնենք Եւրոպական տաճարներուն մէջ...: Տաճարին պատերուն վրայ, գունատած սրբանկարներուն քով եւ վրաները «կրաֆիթի»ները տեսանելի էին: Մարդիկ հաճոյք կ'առնեն վանտալիզմէն:

Սբ. Աստուածածին Մայր Տաճարը երեք մուտքեր, դուռեր ունի. կաթողիկոսին, թագաւորին եւ ժողովուրդին, հասարակ մահկանացուներուն համար: Տպաւորիչ պատահաններուն շուրջի զարդաքանդակները եւ մուտքի մայր դրան հայերէն արձանագրութիւնները շատ բան կ'ըսեն Տաճարին կարեւորութեան մասին:

Յիսուսի Մօր նուիրուած տաճարը նորոգութեան մէջ էր: Բագմաթիւ հաստ, երկաթեայ սիւներ դուրսէն կը յենուէին պատերուն, որպէսզի անոնք ալ չփլին: Տաճարին շուրջ թելերով ցանկապատեր քաշուած էին եւ յայտնի էր որ մեծ գործ յառաջ կը տարուէր հոն:

Երբ ուխտագնացներու խումբը հաւաքուեցանք եւ ամէն անկիւններէն քանի մը հարիւր լուսանկարները եւ «վիտէն»ները ապահովեցինք, բնական էր որ այդ վեհութեան մէջ յիշէինք մեր անցած փառաւոր հազարամեակը եւ «Հայր Մեր»ը, «Սուրբ Սուրբ»ը եւ «Տէր Ողորմեա՛»ն երգէինք քանդուած խորաններուն առջեւ: Կարելի չէ հոս արտագրել այն ապրումները որ մեզմէ իւրաքանչիւրս կ'ունենար այդ պահուն: Բոլորիս աչքերը խոնաւ էին: Պարտուած՝ բայց հպարտ մարդիկ էինք ամէնքս ալ: Եթէ յաղթած ըլլայինք, այս տաճարը տակաւին կանգուն պիտի ըլլար եւ Անին՝ մերը: Հոս, այս կամարներուն տակ մեր Բագրատունեաց արժանաւոր թագաւորները եկեր ու աղօթեր էին: Հոս էին Հայոց Տիկնայք Փափկասունքի ազնուագոյն տիկիները իրենց աղախիններով: Հոս եկած էին Հայոց Բանակի գորավարները Աստուծոյ, Միածինին եւ Անոր Մօր օրհնութիւնն ու պաշտպանութիւնը խնդրելու: Հոս սրբագործուած էր

Հայ Ջինուորին շողողուն սուրը, նետը, աղեղն ու նիզակը՝ Հայրենիքն ու Հայուն պատիւը պաշտպանելու: Հոս, Հայոց կաթողիկոսները երկխօսութեան մէջ էին մտեր Աստուծոյ հետ, Մարիամ Աստուածածինի Սուրբ միջնորդութեամբ: Տաճարին գմբէթը քանդուած էր, ուրեմն մեր աղօթքները անարգել պիտի հասնէին առ Աստուած: Արդեօք Աստուած լսեց մեր թագաւորներուն, կաթողիկոսներուն, գորավարներուն, քաջարի զինուորներուն կամ պարզ հաւատացեալներուն թախանձագին աղօթքները եւ զանոնք պաշտպանեց բարբարոս վոհմակներէն...: Արդեօք Աստուած լսեց մեր աղօթքները...:

Տաճարին մէջ հանդիպեցանք եօթանասուն տարեքին բարեւտուած Լեհ զոյգի մը, որոնք երրորդ անգամ ըլլալով Անիի աւերակները կ'այցելէին: Երբ ուզեցի տեղոյն վրայ մեր Յեղասպանութեան մասին խօսիլ, մարդը ըսաւ որ շատ լաւ գիտէր մեր ողբերգութեան մասին եւ թէ «Մուսա Լեւոն Քառասուն Օրերը» գիրքը կարդացած էր: Ան շատ բարձր խօսեցաւ հայ ժողովուրդի մշակութիւն մասին եւ յոյս յայտնեց որ օր մը Անիի պատմական կոթողները կարելի կ'ըլլայ վերականգնել:

Շրջեցանք Անիի աւերակներուն մէջ: Միտքս եկաւ սա նախադասութիւնը. «Անի քաղաք նստեր կու լայ, Չկայ ըսող մի՛ լար, մի՛ լար»: Ո՞վ է հեղինակը այս սողերուն չեմ յիշեր հիմա:

Տեսանք Սբ. Ստեփանոս եկեղեցին, շինուած 1218-ին:

Տիգրան Հոնեցի (Անիի մեծահարուստ վաճառականներէն մին) շինել տուած Սբ. Գրիգոր եկեղեցին ամենալաւ պահպանուած կառուցն է Անիի մէջ: Եկեղեցույ արտաքին պատերը սքանչելիօրէն զարդարուած են կենդանիներու քանդակներով: Ներքնամասը հարուստ է սրբապատկերներով, որոնք Սբ. Գրիգոր Լուսաւորիչի եւ Յիսուսի կենքէն տեսարաններ ցոյց կու տան:

Սբ. Փրկիչ եկեղեցին, կառուցուած 1035 թուականին Պահլաւունիներու կողմէ, արտաքինապէս 19 կողմերով իսկ ներքինապէս 8 պատերով մեծ գմբէթի մը ձեւը ունի: Այս եկեղեցին շինուած էր «Յիսուսի խաչափայտի մատունքէն կտոր մը պատասպարելու»: 1955-ին, գորաւոր փոթորիկի մը պատճառով եկեղեցիի գմբէթին արեւելեան մասը փուլ եկած է:

Չուարթնոց տաճարի նմանօրութեամբ Գագիկ թագաւորի շինած Սբ. Գրիգոր եկեղեցին (998), 1905-ի Նիկիոյ Մարրի պեղումներու շնորհիւ լոյս աշխարհ եկաւ: Կային անշուշտ Սրբոց Առաքելոց (1031), Ապուղամբենց Սբ. Գրիգոր (11-րդ դար) եւ այլ բազմաթիւ եկեղեցիներ, որոնք ճարտարապետութեան եւ քանդակագործութեան գլուխ գործոց հիանալի շինութիւնները ըլլալով հանդերձ, քանդուած են այսօր: Յուսանք որ Անիի փլատակ եկեղեցիներն ու կոթողները քիչ մը արագ վերականգնին եւ հայ ժողովուրդի անցեալի փառքին վկանները ըլլան: Անիի փլատակ քարերն անգամ բաւարար են մեր անցեալի փառքը պատմելու: Անին եւ մեր պատմութիւնը չեն մեռնիլ մինչեւ այն ատեն՝ երբ մեր սերունդները կը յիշեն մեր փառապանձ պատմութիւնը:

Ըսած էի որ Անիի մէջ կար նաեւ մզկիթ մը, «Մուսիչիբի Մզկիթ»ը, որ շինուած էր Քիլիկիոյ

# ԱԶՆՈՒԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԻՍ ՊԵՏՐՈՍ ՍՈՒՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ԱԼՊԵՐՄԻՆԱՍԵԱՆ

Ձեռի կրնար երեւակայել թէ պիտի գար այս օրը երբ պիտի գուժէին Պետրոսի մահը: Այո, տեղեակ էի իր առողջական վիճակէն, բայց միշտ հաւատացած էի, Պետրոս կրնայ յաղթահարել բոլոր դժուարութեանց եւ շարունակէ ապրել իր սիրելի տիկնոջ եւ դուստրին հետ, ինչպէս նաեւ իր կեանքի կարեւորագոյն գաղափարական ընտանիքին հետ, Ս.Դ.Ջ. Կուսակցութիւնը եւ իր սրտին շատ մօտիկ եւ սիրելի Հ.Մ.Մ.ը:

Իմ ազնուական եւ մօտիկ բարեկամ Տիգրան Սարաֆեանը, հաղորդեց գուժը, արդէն իրմէ կ'առնէի յաճախ Պետրոսի բոլոր լուրերը, լաւ եւ գէշ, դժբախտաբար այս մէկը քիչ մը անապասելի էր, հակառակ անոր, թէ Պետրոս փոխադրուած է հիւանդանոց, եւ վիճակը շատ լաւ էր:

Պետրոսին եւ իմ ծանօթութիւնը սկսած էր 1950 ական թուականներուն երբ ես դեռ պատանի կ'աշխատէի Գեղեցիկներու հաստատութեան մէջ եւ Պետրոսի տունը նոյն թաղին մէջ էր: Ես մեծ յարգանքով կը բարեւէի զինք: Ես զիտէի որ Պետրոսը ակուսքի մեծերէն էր...

Տարիները արագ սահեցան եւ մեր յարաբերութիւնը զարգացաւ երբ «Արդի Թատրոն»-ի խումբը հովանաւորուեցաւ 'Հ.Մ.Մ.ի թատերախումբը ըլլալով, մենք խումբի տղաքս ունէինք մեր նոր տունը, Հ.Մ.Մ.ի ակումբը մեր փորձերէն վերջ, խումբով կը հաւաքուէինք մօտակայ ճաշարան մը, եւ ընկ. Պետրոսը եւ մեր սիրելի վարպետը Կայծակ Գնդունին, մեզի հետ յիշատակելի ժամանակ կ'ունենայինք:

Իմ մտերմութիւնը աւելի հաստատուեցաւ 1971ին երբ Քանադա փոխադրուեցայ Լիբանանէն իմ սիրելի ընկերս՝ Տիգրան Սարաֆեանը ինծի տուաւ Պետրոս Մուշեանի հեռաձայնի թիւը Թորոնթօյի մէջ: Առանց յապաղումի, երբ հասայ Օթթաուա, հեռաձայնեցի Պետրոսին, եւ ըստ սովորականին, Պետրոս տուաւ անուններ եւ հեռաձայնի թիւեր իմ քաղաքիս մէջ, անձեր որոնք կրնային օգտակար ըլլալ իմ կեցութեանս:

Պէտք է ըսեմ թէ մինչեւ օրս այդ անձերուն ընտանիքները դեռ մօտիկ բարեկամներ են ինչպէս ինձմէ առաջ Մեթր Դաւիթեանը գրած էր, Պետրոս պրպտելով անձերու անցեալը անպայման կը գտնէր Հնչակեան կայր, եւ այդ գծով օգտակար դառնալը կը պայմանաւորէր:

Անուհետեւ, անձեր անհատական, կուսակցական եւ միութենական, Պետրոսին մօտ կար հակայական անուանացանկ, աշխարհի տարծքին:

Անուրանալի իրականութիւն է, ուր Պետրոս կար, անպայման գոյութիւն կ'ունենար Ս.Դ.Կ.Կ.Ը, Հ.Մ.Մ.ը նոր Սերունդ Մշակութային միութիւնը եւ մամուլը:

Աւելի քան քառասուն հինգ տարիներ Պետրոս եղաւ պատնէշի վրայ, հիմնելով եւ ընդարձակելով կուսակցական, մարզական, մշակութային եւ մամուլի աշխատանքները, Քանադայի մեծագոյն քաղաք Թորոնթօյի մէջ, յատկապէս հիմնելով «Լուսաբաց»ը շաբաթօրեայ հրատարակութիւնը Ս.Դ.Ջ.Կ.

մամուլի ընտանիքին կարեւոր մէկ մասնիկը:

Պետրոս իր կեանքի 90 գարուններուն, ամէն օր աչքը կը բանար կ'ապրէր եւ կը շնչէր որպէս այդ նուիրեալը Հնչակեան գաղափարախօսութեան եւ ներշնչուած «Քսաններ»ու Պատգամով եւ անմահ Փարամազի խօսքերը իրականացնելով Քսան հազարներ մեզի պիտի հետեւին:

Պետրոսի անունը, համբաւը եւ գործը պիտի շարունակուի իր մով թրծուած երիտասարդ նոր սերունդները Թորոնթօյի թատերական շարքերէ իր յիշատակը պիտի մնայ իր գաղափարային ընկերներու սրտին եւ մտքին մէջ, եւ աշխարհով տարածուած իր անթիւ բարե-



Կամներու մօտ մեր ցաւակցութիւնները իր ընտանեկան պարագաներուն եւ գաղափարական ըն-

կերներուն: Հողը թեթեւ գայ վրադ սիրելի Պետրոս:

Այն պահը, երբ դուք հասկանում ես՝ նրանք դա ստացան

Դա հենց այն է, ինչը ուսուցումը ոգեշնչող է դարձնում:

# ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԴՊՐՈՑ

Մանկավարժներ, ուլքեր գիտեն. որակյալ հանրակրթական դպրոցները Կալիֆորնիան ավելի լավն են դարձնում բոլորիս համար:

CTA.ORG ԿԱՅՔԻՑ ԻՄԱՅԵՐ ԱՎԵԼԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Կճարված է Կալիֆորնիայի Ուսուցիչների Միության Կողմից



### Անկախութեան Տարեդարձը Թող Դառնայ Սկիզբ

#### Շարունակուած էջ 1-էն

ներուն ու կառոյցներուն մօտ: Պետական մակարդակով նշուեցաւ Հայոց Ցեղասպանութեան տարելիցները ու նոր թափ ստացաւ Ցեղասպանութեան նախնական արշար:

Աստուծոյ կողմէն, Հայաստան-սփիւռքի յարաբերութիւնները ստացան նոր որակ, դրուելով աւելի բարձր մակարդակի վրայ: Հայաստանի անկախութիւնը մղեց տասնեակ հազարաւոր սփսփուած քաղաքացիներու վերադառնալու իրենց արմատներուն: Հազարաւորներ առաջին անգամ ըլլալով այցելեցին իրենց հայրենիքը ու անոնցմէ ոմանք փորձեցին գործեր հաստատել ու ներդրումներ կատարել Հայաստանի տնտեսութեան մէջ:

Հայկական ողիմպիական խաղերը իրար մօտ կը բերեն հայրենիքի ու սփիւռքի հազարաւոր մարզիկներ ու երիտասարդներ: Ուսանողական խումբեր կը շրջագային Հայաստանի տեսարժան վայրերը ու հոն կը վերադառնան լաւագոյն յիշատակներով:

Կարելի է երկարել շարքը այն դրական ձեռքբերումներուն ու հպարտադիպ պահերուն, որ անկախութիւնը շնորհեց մեր ազգին:

Միւս կողմէ սակայն, Հայրենիքը կը գտնուի բազմաթիւ մարտահրաւրէրներու առջեւ ու կը դիմագրաւ մեծ տագնապներ: Աստուծոյ գլխաւորը կը հանդիսանայ շարունակուող արտագաղթը՝ դէպի այլ երկիրներ: Իշխանութիւններուն աչքին առջեւ ու անոնց լուր

մեղսակցութեամբ կը պարպուի հայրենի հողը: Տնտեսութիւնը կեդրոնացած կը մնայ մի քանի տասնեակ ընտանիքներու ձեռքերուն մէջ, արգելափակելով երկրի զարգացումը եւ հարստութեան համաչափ բաշխումը՝ բնակչութեան տարբեր խաւերուն միջեւ:

Իսկական ժողովրդավարութեան բացակայութիւնը, կեղծուած ընտրութիւնները, արդարադատութեան բացակայութիւնը եւ բազմաթիւ այլ բացասական երեւոյթներ կը մղեն տասնեակ հազարաւորներու ու յատկապէս երիտասարդութեան, իր ապագան փնտոելու այլ ցամաքամասերու վրայ:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը բնադատելով հանդերձ Հայաստանի իշխանութիւններու վարած տնտեսական ու ընկերային բազմաթիւ սխալները, նպատակ չունի երբեք, երես դարձնելու հայրենիքէն ու կամ յուսահատութեան մղելու մեր ժողովուրդը: Ընդհակառակը, մենք կառչած կը մնանք մեր երկրին ու անոր անկախութեան: Վստահ ենք որ բացասական երեւոյթները պիտի ունենան ժամանակաւոր բնոյթ ու մեր ժողովուրդը պիտի կարողանայ յաղթահարել իր դիմագրաւած բոլոր դժուարութիւնները:

Մեր մաղթամբ այն պիտի ըլլայ, որ անկախութեան 25-րդ տարին դառնայ սկիզբ՝ Հայաստանի Հանրապետութիւնը դնելու ճիշդ ուղի վրայ ու մեր ժողովուրդը սկսի վայելել անկախութեան բարիքները՝ բարգաւաճ, խաղաղ, ապահով ու արդար պայմաններու տակ:

### ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱՋԱՐԻ ՅՈՎԻԸ

#### Շարունակուած էջ 8-էն

հայրենիքէն բազմակողմանի կարիքները որոնք անմիջական լուծումի կը կարօտին, կ'առաջարկեմ հետեւիլ կաթողիկէ Քահանայապետին համամարդկային կոչին: -

1. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի վանքը, ուր սակաւաթիւ միաբաններ կ'ապրին (մեծաւ մասամբ Պիքֆայայի ամառանոցն են, ուր կան նաեւ շատ ազատ սենեակներ), վերածել մասամբ մը բնակութեան կեդրոնի՝ անտուն սուրբահայրութեան, հոգ չէ թէ ըլլան անոնք մի քանի տասնեակ ընտանիքներ: Օգնութեան առաջին ճշմարիտ օրինակը պէտք է տայ քարոզողը:

2. Իւրաքանչիւր Հայ ընտանիք արժամապէս հիւրընկալէ սուրբահայ մը, թէկուզ ո՛չ ազգական: Այս արհաւիրքին առջեւ բոլորս այնչափ ճակատագրին դատապարտուած ազգակիցներ ենք:

3. Զմմառի վանքի հակայ տարածութեան վրայ չբնակուած սենեակները տրամադրել մեր սուրբահայ գաղթական եղբայրներուն եւ քոյրերուն:

4. Իւրաքանչիւր Հայ Եկեղեցի, առանց դաւանական խտրութեան հիւրընկալէ առ նուազն մէկ սուրբահայ ընտանիք:

5. Արտասահմանեան մեր բոլոր ծխական գաղութները (Էջմիածին, Անթիլիաս) իրենց նիւթական մասնակցութիւնը կը բերեն նախնականութեան: Բայց այդ բոլորը բաւական չեն սուրբահայրութեան ծովածաւալ կարիքներուն հասնելու համար: Անհրա-

ժեշտ է յստակ կերպով որդեգրել ընտանիք մը կամ ընտանիքներ:

6. Լիբանանէն եւ Սուրիայէն երկու քայլ անդին գտնուող Մելքոնեան Կրթական Հաստատութեան շէնքերը ժամանաւորակապէս անյապաղ բանալ սուրբահայ գաղթականներուն առջեւ, եւ դպրոցը վերածել գաղթականական կեդրոնի, ցնոր տնօրինութիւն:

Ահաւասիկ հայրութեան առջեւ ծառայող ճգնաժամային պարտաւորութիւններ, որոնց լրջութեան պէտք է անդրադառնալ եւ մեր առաւելագոյն աջակցութիւնը ցուցաբերել: Ի վերջոյ մեր այս բոլոր դժբախտութեանց ետին կը կանգնի Սուլթան Համիտներու հարազատ որդի եւ ժառանգորդ թուրք պետութիւնը, որ ցեղասպանութիւն գործադրելէ ետք տակաւին կը փորձէ իր եաթաղանէն մագապուած ազատած, անապատներու կիզիչ արեւուն տակ հալած ու մաշած հայր բեկորներուն վերջին մասնիկն անգամ արիւնաքամ դարձնելով հայրթափ ընել իր երկրին սահմանամերձ բոլոր վերակենդանացեալ Հայ գաղութները:

Բոլոր ժամանակներէ աւելի, պարտաւոր ենք ունենալ յանձնառու կեցուածք, բարձր հասկացողութիւն ցուցաբերելով մեր առջեւ կանգնող հասարակական-ընկերային եւ տնտեսական բոլոր հարցերուն հանդէպ ճգնաժամային այս պահուն, եւ միշտ ըլլալ հաշուետու եւ թափանցիկ մեր գործունէութեան մէջ, կարենալ ապահովելու համար համասփիւռ հայրութեան վստահութիւնն ու գնահատանքը:

Կատարենք ինչ որ կը քարոզենք.....

### ՔՍԱՆ ԱՆՍԱՅՆԵՐՈՒ ՆԱՐԱՏԱԿՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱԲՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ

#### Շարունակուած էջ 7-էն

Նաեւ կարեւորել պետական յանձնաժողովի նախաձեռնութեամբ պատրաստուած համահայկական հռչակագիրը, հաւատալով, որ հոն տեղ գտած դրոյթները տեղ կը գտնեն աշխարհով մէկ տարածուած հայրութեան պատասխանատու մարմիններու հիմնական օրակարգերուն մէջ: Գալով Հայ-թրքական հիմնախնդրին, պէտք է նոր կամուրջներ հաստատել թրքական այն կողմերուն հետ, որոնք ոչ միայն կ'ընդունին Հայոց Ցեղասպանութեան փաստը այլ նաեւ պատրաստ են մէկ քայլ առաջ երթալով իստիլ հաւանական համագործակցութեան մասին: Սակայն այս բոլորը պէտք է ըլլան մտածուած եւ ամենակարեւորը համահայկական պարունակի մը մէջ: Թուրքիոյ իշխանութիւններուն ներկայացուելիք ցանկացած պահանջ պէտք է ըլլայ նպատակային: Այսինքն մեր պահանջատիրութիւնը պէտք չէ սահմանուի միայն եկեղեցիներ կամ կալուածներ պահանջելով այլ մեր աշխատանքները պէտք է ըլլան համահայկական ընդհանուր ձեւաչափերով եւ մօտեցումներով:

Երրորդ՝ Արցախի հանրապետութեան ամրապնդումը: Այդ աշխատանքը պիտի տարուի երկու ուղղութիւններով: Նախ Արցախի սահմանի ապահովումն ու Արցախի հերոսական ժողովուրդի անվտանգութեան պահպանումը եւ երկրորդ՝ Արցախի հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացներու շարունակումը: Պէտք է նաեւ նշել, որ Արցախեան հիմնախնդրի կարգաւորման որեւէ գործընթաց պէտք է իբրեւ հիմք ունենալ Արցախցի ժողովուրդին ազատ ինքնորոշման իրաւունքը:

Արցախը մեր յաղթանակներուն պակն է ու մեր ժողովուրդի անվտանգութեան խորհրդանիշը եւ այդ առումով մենք պատրաստ պէտք է ըլլանք ցանկացած զոհողութեան:

Չորրորդ՝ շարունակել ամրապնդել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները: Այս առումով պէտք է աշխատանք տանիլ մէջտեղ բերելու նոր գործնական եւ արդիական ծրագիրներ: Ինչպէս նաեւ աստարել, որ երկու հաստատուներու միջեւ փոխադարձ վստահութեան միջոցով ստեղծուի եւ հիմքը դրուի գործնական ինթէլիգենցիան գործընթացին: Ի վերջոյ Հայաստան-Սփիւռք միասնութիւնը պէտք չէ մնայ սոսկ լոգոսգային յայտարարութիւն: Այս առումով, յատկապէս Սփիւռքահայ երիտասարդութեան ներգրաւումը այսօրուան Հայաստանի զարգացման ընդհանուր գործին մէջ կը մնայ դանդաղ եւ թերի:

Այս բոլորով հանդերձ, մենք կը մնանք հաստատակամ եւ հաւատացող հայրենիքի պայծառ ապագային, ի տես մեր արի, խելացի, նորարար եւ հայրենիքին հանդէպ մեծ սեր ու հաւատք ունեցող նոր սերունդին: Մեր դարը միայն արդիականութեան դարը չէ: Մեր դարը մարդու թի, յաւելեալ ներու-

ժի ու մարդկային նոր տեսակի դարն է: Իսկ այսօրուայ նորսերունդը մարդկային այդ նոր տեսակի ու ներուժի ամենավառ ներկայացուցիչն է:

Այս բոլորէն անդին կարեւոր է նշել, որ Հայաստանի սահմաններուն անվտանգութիւնը կարմիր գիծ է բոլորիս համար: Վերջին օրերուն Արցախեան սահմանին վրայ գրանցուած դէպքերը եւ յատկապէս Հայաստանի Տաւուշ սահմանային շրջանին մէջ հայ խաղաղ բնակիչներուն դէմ ազդեցիկ ճանաչական կողմի ոտնձգութիւնները կարեւոր ապացոյց են, որ մեր երկիրը կը գտնուի սպառնալիքներու տակ: Եւ այս առումով մեզմէ իւրաքանչիւրէս կը պահանջուի ըլլալ Հայոց բանակին կողքին: Առանց ուժեղ բանակին: Առանց Հայոց բանակի արի բազուկի գարկերուն վերը նշուած բոլոր կէտերը անհիմն կը դառնան: Հայրութեան նպատակներու ճամբան սկիզբ կ'առնէ մեր սահմանային կէտերէն ու այս առումով ինչպէս երէկ այսօր եւս մենք իբրեւ Հնչակեան կուսակցութիւն մեր ամբողջանուէր նեցուկը կը յայտնենք, թէ մեր ապահովական մարմիններուն եւ թէ մեր սահմանները պահպանող բանակի բոլոր անձուէր գիտուորներուն եւ սպաներուն:

Աւարտին իբրեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ կու գամ ողջունելու ձեզմէ իւրաքանչիւրին ներկայութիւնը այստեղ:

Մենք բոլորս Օսմանեան թուրքի եաթաղանին յաղթականակած հերոսներուն յետնորդներն ենք:

Մեր կուսակցութեան ճանապարհը եղած է պայքարի եւ նահատակութեան ճանապարհ: Ու այսօր եւս մենք այդ նուիրումը պահած ենք մեր սրտերուն մէջ:

Հնչակեան քսան նահատակներուն հերոսական սիրանքը վաղեմութեան որեւէ ժամկէտ չունի եւ չի կրնար ունենալ: Անոնք շատոնց փշրած են ժամանակային բոլոր սահմանները, եւ որքան մենք կը հեռանանք այդ օրէն, այնքան կը մեծնայ անոնց խորհուրդն ու տասնապատիկ աւելի արդիական կը դառնան անոնց պատգամները:

Այդ պատգամները արդիական էին երէկ, արդիական են այսօր եւ վստահօրէն արդիական պիտի մնան նաեւ վաղը:

Այդպէս է՝ մեծերուն դասերը սկիզբ ունին, բայց ո՛չ աւարտ, որովհետեւ այդպիսին է անոնց առաքելութիւնը, այդպիսին է անոնց անսահման հաւատը, երկաթէ կամքն ու անկոտորում Ոգին, որովհետեւ այդպիսին է նաեւ հերոսական այն ժողովուրդին պատմութիւնը, որուն գիրկէն ելան հնչակեան քսան անմահները...

Ողջոյն բոլորիդ: Ողջոյն անոնց, որոնք կը հաւատան մեր մեծ իտէալներուն Մայր Հայաստանի, անպարտելի Հայաստանի եւ Հզօր Հայաստանի բոլոր ճանապարհներուն վրայ:

Կեցցէ, Հայ ժողովուրդը:  
Կեցցէ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաքաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ ԲԱԲԱՐԱՐՈՒԵՑԻՆ ՍԵԿ ՄԵՏԱԼՈՎ ԵՒ 3 ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳՐՈՎ

ԱՄՆ-ի Լաս Վեկաս քաղաքում Սեպտեմբերի 7-ից 12-ն անցկացրած ըմբշամարտի աշխարհի առաջնությունում յունահունգարական եւ ազատ ոճի Հայաստանի հաւաքականները բաւարարուեցին մէկ մետալով, որը նուաճել էր 23-ամեայ Արթուր Ալեքսանեանը: յունահունգարականների մրցաշարում գիւմրեցի ըմբիշն ամենաուժեղն էր 98 կգ քաշային կարգում, որում պաշտպանեց աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Օլիմպիական ախոյեան Լեւոն Զուլֆալյակեանի գլխաւորած թիմի կազմում Լաս Վեգասում հանդէս եկան նաեւ Ռոման Ամոյեանը (59 կգ), Միհրան Յարութիւնեանը (66 կգ), Վարչամ Բորանեանը (71 կգ), աշխարհի 2014թ. ախոյեան Արսէն Զուլֆալյակեանը (75 կգ), Էդուարդ Սարգսեանը (80 կգ), Մաքսիմ Մանուկեանը (80 կգ) եւ Էդգար Խաչատրեանը (130 կգ):

Առնուազն արծաթէ մետալակիր պէտք է դառնար նաեւ Միհրան Յարութիւնեանը, որը կիսաեզրափակիչում մրցավարական խայտառակ կողմնակալութեան պատճառով պարտուեց կորեացի ըմբիշին:

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հաւաքականը մնաց առանց մեդալի: Արայիկ Բաղդադեանի գլխաւորած թիմի կազմում մետալների համար պայքարեցին Գարիկ Բարսեղեանը (57 կգ), Վոլոդիա Ֆրանզուլեանը (61 կգ), աշխարհի 2013թ. ախոյեան Դաւիթ Սաֆարեանը (65 կգ), Գրիգոր Գրիգորեանը (74 կգ), Մուսա Մուրթազալիեւը (86 կգ), Էդգար Ենոքեանը (97 կգ) եւ Լեւան Բերիանիձէն (125 կգ): Բարսեղեանը, Մուրթազալիեւը եւ Ենոքեանը պարտուեցին մեկնարկում, իսկ Ֆրանզուլեանը, Սաֆարեանը, Գրիգորեանը եւ Բերիանիձէն պարտութիւններ կրեցին մէկական յաղթանակ տանելուց յետոյ: Քանի որ Լեւան Բերիանիձէն յաղթած թուրք ըմբիշը հասաւ եզրափակիչ, Հայաստանի ներկայացուցիչը հնարաւորութիւն ստացաւ պայքարել պրոնզէ մեդալի համար: Սփոփիչ գոտեմարտերում նա յաղթեց իսպանացի Կուբա Վասկեսին (11:0) եւ դազախ Դաուրեւ Շաբանբային (3:2), սակայն բրոնզէ մետալի համար գոտեմարտում 0:11 հաշուով պարտուեց ռուս Բիլեալ Մախոմովին եւ բաւարարուեց 5-րդ տեղով:

Այսպիսով, Հայաստանի ըմբիշներին 2016թ. Ռիոյի Օլիմպիական խաղերի ուղեգրեր պահանջեցին միայն Արթուր Ալեքսանեանը, Միհրան Յարութիւնեանը եւ Լեւան Բերիանիձէն: Աշխարհի առաջնութիւնից օլիմպիական ուղեգիր են ապահովում 1-6-րդ տեղ գրաւած ըմբիշները:

### ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՄՊԱՐՏԱԿԻ» ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ԵՒ ՍՏԱՑԱԻ ՎՆԱՍՈՒԱԾԲ

Ֆուտպոլի Ռուսաստանի առաջնութեան 8-րդ տուրում «Սպարտակը» Մոսկովայում նուազագոյն հաշուով առաւելութեան հասաւ «Ռոստովի» նկատմամբ:



Տանտէրերի մեկնարկային կազմում էր Հայաստանի հաւաքականի յարձակուող Եուրա Մովսիսեանը, ով խաղաց 60 րոպէ եւ փոխարինուեց վնասուածքի պատճառով: Խաղի միակ գոլը 28-րդ րոպէին խփեց հոլանդացի կիսապաշտպան Քվինսի Պրոմեուրը: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսը դարձեալ մնացել էր «Սպարտակի» պահեստայինների թւում:

Այս յաղթանակից յետոյ Դմիտրի Ալենիչեւի թիմը վաստակեց 6 միաւոր եւ հաւասարուեց չորրորդ տեղում գտնուող «Ջենիթին»:

### ՄՈՒՐԻՆԻՍՈ. ՀԱՆԳԻՍ ԵՂԷՔ, «ՉԵԼՍԻՆ» ԴՈՒՐՍ ՉԻ ՄՆԱՅ ՊՐԵՄՅԵՐ ԼԻԳԱՅԻՑ

Լոնտոնի «Չելսիի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրիյինին մեկնաբանել է Պրեմիեր լիգայի 5-րդ տուրում «Էվերտոնից» կրած պարտութիւնը 1:3 հաշուով:

«Մա կարիերայիս վատագոյն արդիւնքն է: Այն չի համապատասխանում իմ որակներին, սակայն ես կը շտկեմ իրավիճակը եւ ճնշում չեմ զգում: Չեմ կարծում, որ ինչ-որ մէկը կարող է գալ եւ այս աշխատանքը կատարել ինձանից լաւ: Տիտղոս նուաճելու համար մենք պէտք է ցուցադրենք արդիւնք, սակայն այժմ դա կախուած է նաեւ միւս ակումբներից: Մեր մրցակիցները պէտք է միաւորներ կորցնեն: Ամէն դէպքում, մարզիչ կարող են հանգիստ լինել, որ «Չելսին» տեղը չի կորցնի Պրեմիեր լիգայում: Մրցաշրջանի հենց առաջին խաղից մենք արժանի էինք աւելիին, քան այժմ ունենք», - մարզիչի խօսքը մէջբերում է Daily Mail-ը:

Յիշեցնենք, որ Պրեմիեր լիգայի 5-րդ տուրից յետոյ ախոյեանի տիտղոսը պաշտպանող «Չելսին» 4 միաւորով 17-րդ տեղում է եւ 11 միաւոր գիշում է առաջատար «Մանչեսթեր Սիթիին»:

### ԲԱՆՏԱԻՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ռաֆի եւ Թինա Գրիգորեաններ բախտաւորուած են առջինեկ դուստրով եւ անուանած ձինսա:  
Մեր ինդակցութիւնները նորածինի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեաններուն:

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 20-Ապրիլ 19  
Այս շաբաթ արժէքաւոր տեղեկութիւններ պիտի տրուին քեզի, գորոնք գաղտնի պէտք է պահես յաւիտեան: Առիթը պիտի ընծայուի քեզի ժամօթանալու համբաւաւոր անձնաւորութեան մը հետ: Հակառակ սրամիտ ըլլալուդ շատ դիւրին է քեզ ծուղակը ձգելը, գոյշ եղիլ: Բախտաւոր թիւերդ են: 10,16,21,22,26,44

ՅՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20  
Այս շաբաթ ապահովութեանդ մեծ ուշադրութիւն յատկացուր եւ ընտանիքդ զգուշացուր վտանգներէ: Հակառակ անոր որ գործերդ անյաջող կ'ընթանան, փոխանակ յուսախաբ ըլլալու, վայելած բարիքներուդ մասին մտածէ: Արագ մտածելակերպը յաճախ սխալ քայլերու կ'առաջնորդէ: Բախտաւոր թիւերդ են: 11,17,26,28,33,38

ԵՐԿՈՒՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20  
Այս շաբաթ նոր բարեկամներ քեզ պիտի առաջնորդեն նոր ընկերային միջավայրի մը մէջ, մի փորձեր դուք քեզ փոխել սիրուելու համար, անձդ կրնաս կորսնցնել: Հետապնդէ տաղանդներդ, միեւնոյն ատեն քաջալերուելով արդիւնքներէն: Բախտաւոր թիւերդ են: 9,21,34,38,41,43

ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22  
Այս շաբաթ քու իմաստութեամբդ եւ կատակախօսութեամբդ պիտի կարողանաս գաղափարներդ պարտադրել շուրջիներուդ վրայ: Անկախ եւ ստեղծագործ անհատականութիւն մը ունիս, շատ յաճախ չես ենթարկուիր: Աղմկոտ վայրերէն հեռու մնացիլ: Բախտաւոր թիւերդ են: 3,11,19,29,37,45

ԱՌԻԹ Յուլիս 23-Օգոստոս 22  
Այս շաբաթ խաբէբայութեան եւ խարդախութեան գոհ պիտի դառնաս, բայց շուտով ինդիքներդ պիտի կարենաս ազատել: Հարցերդ անձնական մի առներ եւ որոշումներու մի հանգիլ: Համբերատար եղիլ հասկնալու համար ուրիշներու հեռանկարները: Բախտաւոր թիւերդ են: 9,17,28,34,45

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22  
Այս շաբաթ շատ լաւ կերպով պիտի կրնաս ընթանալ գործիդ մէջ: Ոեւէ անհատ օգնութիւն մի յուսար, այլ վստահէ քու բազուկներուդ եւ կարողութեանդ: Շուտով մի յուսալքուիր, շատ լաւ բաներ պիտի պատահին: Մեծ որոշումներ առնելու մի շտապեր: Բարեկամներու հետ վայելած յարաբերութիւնդ ստիպողական չէ, եթէ գոհ չես՝ հեռացիլ: Բախտաւոր թիւերդ են: 19,27,29,37,42

ԿՇԻՈՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22  
Այս շաբաթ քեզի համար վերածնունդ մը պիտի ըլլայ, անցեալի սխալներդ օգտուելով, նոր անձ մը եղիլ դրական նկարագրով: Դրդիչ եւ կոպիտ արտայայտութիւնները զգուշացիլ, չ'ըլլայ թէ վիրաւորես սիրածներդ եւ անոնք չ'ներեն քեզի: Բախտաւոր թիւերդ են: 1,12,22,25,35,37

ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21  
Այս շաբաթ ընտանիքիդ անդամներուն եւ բարեկամներուդ հետ լաւ ժամանցներ պիտի ունենաս եւ լաւ կարծիքներ պիտի փոխանակես: Քու դատողութիւնդ մեծ ազդեցութիւն պիտի ունենայ անոնց ճակատագրին նկատմամբ: Հաւաքոյթի մը ընթացքին ուշադրութեան կեդրոնը պիտի ըլլաս, փորձէ քու օգտիդ օգտագործել պարագան: Բախտաւոր թիւերդ են: 3,8,16,21,31,32


ԱՂԵՂՆԱԻՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20  
Այս շաբաթ կարծես երեւակայական աշխարհ գտնուիս, յաջողութիւններդ անհաշիւ պիտի ըլլան: Փոքր նեղութիւն մը քեզ քիչ մը պիտի անհանգստացնէ, բայց մի վիատիր՝ շուտով պիտի յաղթահարես: Ներքին գաղտնիքներդ մի բաժնեկցիլ, սուտ տարածայնութիւններ կանխելու համար: Բախտաւոր թիւերդ են: 2,24,30,33,41,44

ԱՅԾԵՂՋԻՐ Դեկտեմբեր 21-Յունուար 19  
Այս շաբաթ ծրագիրներդ յաջողցնելով պիտի փաստես թէ կարող եւ ճշդապահ ես, եւ կեանքիդ տէրն ես: Ընտանիքիդ լաւութիւնը սկզբնական եւ տարրական մտածումդ պէտք է ըլլայ: Չափաւոր եղիլ ամէն բանի մէջ, նամանաւանդ միւսական գետնի վրայ: Բախտաւոր թիւերդ են: 2,5,27,29,30,44

ԾՈՎԱՆՈՅՑ Յունուար 22-Փետրուար 18  
Այս շաբաթ քեզի համար մեծ փոփոխութիւններ նախատեսուած են գործիդ մէջ, ճարտարութիւնդ շատ արժէքաւոր առաքինութիւն մըն է եւ գործընկերներուդ ուշադրութեան առարկան պիտի դառնայ: Ընտանեկան պարագաներուդ մէջ նաեւ փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ: Պատահական հանդիպում մը անձի մը հետ, սիրային յարաբերութիւն մը պիտի ստեղծէ՝ մի աճապարեր: Բախտաւոր թիւերդ են: 14,16,20,34,36,40

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 21  
Այս շաբաթ գործի կամ անձնական ճամբորդութեան ծրագիր մը շատ հաւանական է որ իրականանայ: Լաւատես եղիլ, օգտուէ առիթէն եւ ուրիշներուն բարոյական խրատներ մի տար: Գիտցիլ անձնական զգացումներդ բնորոշել գործի յարաբերութիւններդ: Բախտաւոր թիւերդ են: 1,21,25,34,39

### ՄԱՅԱԶԴ



**ԷՏՈՒԱՐՏ ՆԱՀԱՊԵՏ**  
Ծնեալ՝ Օգոս. 21, 1926ին, Հալէպ

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ **ԷՏՈՒԱՐՏ ՆԱՀԱՊԵՏ**-ի մահը որ պատահեցաւ Ուրբաթ, Սեպտեմբեր 11, 2015ին:

Յուրարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ **Չորեքշաբթի, Սեպտեմբեր 16, 2015, առաւօտեան ժամը 9:00ին, Hollywood Hills Forest Lawn** գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին՝ **Չարուհի Նահապետ** Զաւակները՝ Մայք եւ Նորա Նահապետ եւ զաւակները Վազգէն Նահապետ Վարուժ եւ Ռիթա Նահապետ եւ զաւակները Եւ համայն Պոպէլեան, Շաքիեան, Անուշեան, Մանուկեան, Թաշճեան, Աւետեան, Ալվազեան, Մակարեան, Չարչաֆճեան, Մարգարեան, Ֆաթմեան, Տէր Սարգիսեան, Աւետիքեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

Ի յիշատակ հանգուցեալին եւ փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել **SARF-ին (Սուրիահայրութեան Օժանդակ Մարմին)** P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

**ԱՐՄԻՆԷ ՓՈՇՈՂԼԵԱՆԻ** մահուան տխուր առիթով, փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթի բարգաւաճման ֆոնտին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար շնորհակալութիւն կը յայտնէ «Մասիս»-ի խմբագրութիւնը:

Տէր եւ տիկ. Վարդան, Կարինէ Տեփոյեան	\$500
Տիար Հայկ Հաճընեան	\$200
Տէր եւ Տիկ. Մկրտիչ Փոշոյլեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէրոզլեան	\$100
Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Գաթիա Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդեմ եւ Նայիրի Կարկուտեան	\$100
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քնար Պողարեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան	\$100
Տիար Ճորճ Բարսեղեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ազատուհի Գալանճեան	\$100
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Պերթա Թոփալեան	\$100
Տէր եւ Տիկ. Էլի եւ Ազիկ Թոփալեան	\$100
Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմիկ Թոմպուլեան	\$100
Տէր եւ Տիկ. Պողոս եւ Արփի Մարգարեան	\$100
Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Հերմինէ Բաժարտեան	\$75
Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սուզանա Սինանեան	\$50
Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Հուրի Թաթլեան	\$50
Տիկ. Սոնիա Յովնանեան	\$50
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան	\$50
Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Արփի Թիւճեան	\$50
Օր. Շաքէ Առաքելեան	\$50
Տէր եւ Տիկ. Սամ եւ Գոհարիկ Սասունեան	\$50
Տէր եւ Տիկ. Միհրան եւ Թամար Խաչատուրեան	\$50

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռախօսով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին **ԱՐՄԻՆԷ ՓՈՇՈՂԼԵԱՆԻ** մահուան առթիւ:

Մասնաւոր շնորհակալութիւն **Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին** եւ **Հ.Մ.Մ.ի Տիկնանց Վարչութեան**, իրենց զօրակցութեան եւ միախառնութեան համար:

### ԳԱԼ ՏԱՐԻ՝ ԿԱՆ

Շարունակուած էջ 15-էն

Շատտատիտներու կողմէ շուրջ 1075 թուականներուն: Մզկիթին մինարէն կանգուն է տակաւին, որուն վրայ արաբերէնով գրուած է «պըիսմիլլահ» (Աստուծոյ անու- նով):

Անիի մէջ կայ տակաւին Միջ- նաբերդը, որ տափարակ բլուրի մը վրայ շինուած էր: 7-րդ դա- րուն Կամարական Իշխանները զայն բարձրացուցած էին: Նիքո- լաս Մարրի պեղումներու ժամա- նակ երեւան ելան միջնաբերդին պարիսպները, Բագրատունեաց թագաւորներու պալատը, երեք եկեղեցիներ եւ զանազան պետա- կան շէնքեր: Տեսանք նաեւ հեթա- նոսական շրջանէն մնացած առ- րուշան մը, շատ հաստ, մուժ մոխրագոյն կամ սեւ սիւներով եւ իր կլոր, գոհի սեղանով: Արդէն կրնաք պատկերացնել քուրմերու խումբը եւ սպիտակ շորեր հագ- ուած, ծաղկեթագերով աւելի գե- ղեցկացած հայ պարմանուհիները, որոնք երգերով եւ պարերով կ'առաջնորդէին զոհաբերուելիք կենդանիները:

Հոս կ'արժէ յիշել Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ Վահրամ Մավեանի պատմած մէկ պատմութիւնը: Անիի պարիսպ- ներէն դուրս, մօտակայ քարայր- բնակարաններու մէջ ապրող հո- վիւններէն մէկուն կինը, Կիրակի օր մը քաղաք եկեղեցի կ'երթայ: Եկեղեցիին մէջ հարուստ տիկին- ներ կը սկսին ծաղրել այս համեստ կինը: Տուն վերադարձին, կինը կը սկսի լալ եւ գանգատի իր ամուս- նոյն: Մեր հովիւն ալ կը խոստա- նայ մասնաւոր մատուց մը շինել միայն իրեն համար եւ տարիներ աշխատել էտք, կը կատարէ իր խոստումը: Այսպէսով Անին կ'ու- նենայ իր հազարամէկերորդ եկե- ղեցին, «Հովիւի եկեղեցի»:

Քալելով գացինք այն բար- ձունքը ուրկէ Ախուրեան գետը կ'երեւէր: Գետին վրայի քանդ- ուած կամուրջը աղաչական մեզի կը նայէր: Հոգիդ բերանդ կու գայ նման տեսարաններու առջեւ: «Խոստացանք» կամուրջին օր մը վերադառնալ, վերաշինել եւ մի- ացնել Հայաստանը Անիին...: Կա- մուրջին միւս կողմը արդէն Հա- յաստանն է: Մեր յաւերժական Հայաստանը:

Փոքր խումբերով կը վերա-

դառնայինք դէպի մեր պասը: Ես, Գէորգ Յակոբեանը, Սուրէն Ղա- գարեանը, Արամ Ղուկասեանը եւ Տիգրան Ղորղորեանը մէկ խումբ կազմած առջեւէն կ'երթայինք: Մեր ետեւէն կու գային մեր տի- կինները (հայ ենք, չէ՞): Չորս թուրք երիտասարդներու հանդի- պեցանք, որոնք կը պտտէին Անիի աւերակներուն մէջ: Անցանք: Երբ պարիսպներէն դուրսն էինք, տե- սայ որ Քաթիա Ղորղորեանը յուզ- ուած էր: Ըսի՝ բնական է: Երբ մօտեցայ, նշմարեցի որ միւս տի- կինները կը փորձէին զինք հան- դարտեցնել: Իմացայ որ այդ չորս թուրք երիտասարդներէն մին, Քաթիայի կուրծքէն կախուած խա- չը երբ կը տեսնէ, կը թքնէ վրան: Չեմ գիտեր, ե՞ս՝ թէ՛ այդ թուրք սրիկան աւելի բախտաւոր դուրս ելանք այս դէպքէն: Եթէ ես տեսնէի այդ դէպքը, վստահաբար պիտի չկարենայի ինքզինքս զսպել եւ Անիի քարերէն մէկը հաւանաբար այդ շունին գլխուն փակցնէի, ես ալ որպէս կուռարը կամ մարդաս- պան՝ բանտարկուէի: Արդեօք «քրիստոնեայ աշխարհ»ը ոտքի պիտի ելլէ՞ր զիս պաշտպանելու...:

Շատ դժուար եղաւ Անիէն բաժնուրիլը: Կարծես ի՛րապէս հի՛ն սիրելիի մը «մնաք բարով» կ'ըսէ- ինք, հարազատէ մը կը բաժնուէ- ինք: Մերը բաց «ցտեսութիւն» պիտի ըլլայ...:

Դէպի Կարս մեր ճամբուն վրայ, պասին մէջ Գէորգ Յակոբ- եանը կէս կատակ կէս շիտակ հարցուց որ եթէ Անին մեզի վերադարձնեն թուրքերը, ինչ- պէ՞ս պիտի վերաշինենք զայն, անհրաժեշտ միլիոնները ուրկէ՞ պիտի բերենք: Ըսի շատ պարզ է: Երբ որ Անին մեզի վերադարձ- նեն, աշխարհի բոլոր Անիներուն վրայ տասը տոկոս եկամուտային սիրոյ տուրք կը նշանակենք: Կ'ըսենք նաեւ որ միայն անուշիկ եւ զեղեցիկ Անիներէն պիտի գան- ձենք այս տուրքը: Բայց, այն Անիները որոնք ինքզինքնին շատ աւելի զեղեցիկ կ'ըզգան, կրնան իրենց եկամուտին տասը տոկո- սէն աւելին տալ Անիի վերաշի- նութեան սիրոյ տուրքի ֆոն- տին: Կը կարծէ՞ք որ որեւէ մէկ Անի այդ տուրքը պիտի չտայ, կամ միայն տասը տոկոս սիրոյ տուրքը տալով պիտի բաւարար- ուի...:

Երբեմն երազելը լաւ բան է:

### ՑԱԲԱՑԱԿԱՆ

**ԹԵՓՈՐԱ ԹԱԹՈՒԼԵԱՆԻ** մահուան տխուր առիթով (մահացած Քանատա) Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինն ու յարակից կառույցները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն, հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն: Եւ Տիկ. Վարդուհի եւ Տիգրան Սարաֆեանին եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար **Տէր եւ Տիկ. Գրիգոր Թաթուլեանին** եւ **Տէր Տիկ. Համբիկ Թաթուլեանին**:

### ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

**ԹԵՓՈՐԱ ԹԱԹՈՒԼԵԱՆԻ** մահուան տխուր առիթով Ազնես Փշտիկեան եւ Մալանուշ Ճէրճեան իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$200 կը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

### ՑԱԲԱՑԱԿԱՆ

**ՊԵՏՐՈՍ ՄՈՒՇԵԱՆԻ** մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան** իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տուրք կը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ



Փառաստօն

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

OFFICIAL SPONSOR



SPONSORS



Glendale Wholesale Electrical Supply



The Village Restaurant



MEDIA SPONSORS



www.massispost.com

SUNDAY SEPTEMBER  
20, 2015

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

GENERAL SPONSOR

INNOVATIVE

Designs Manufacturing, Inc.



By TED & NORA KOROGHLIAN



Food Service Provided By:

Raffi's Market



and



Live Music

Dancing

Art Work Exhibition

Kids Games

Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ

ԵՒ ԳԻՐԹԵՐՈՒ ՎԱՃԱՌԻ

ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցեք Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938